30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1997, ԵՐԵՔՇԱԲԹԻ #186 (1440)

Azg Ազգ

Բորիս Ելցինը կրկին հաստատեց, որ Չեչնիային անկախություն չի տալու

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինն այսօր մերժեց կարգավիճակի մասին չեչենների առաջարկը: Հրապարակված հայտարարագրում Բորիս Ելցինը կրկնեց, որ Չեչնիայի հետ կստորագրվի այնպիսի պայմանագիր, ինչպիսին որ ստորագրվել է ՈԴ-ի մյուս հանրապետությունների հետ՝ ներառյալ Թաթարստանի:

Իսկ Չեչնիայում շարունակվում են վերանորոգման աշխատանքները հանրապետության տարածքով անցնող Բաքու-Գրոզնի-Նովոռոսիյսկ նավթամուղի հատվածում: Ռուսաստանցի բանվորներին պաշտպանում են Չեչնիայի Ազգային գվարդիայի 5 վաշտեր: Նավթամուղի արդեն իսկ վերանորոգված հատվածները նույնպես պաշտպանվում են: Վերանորոգման աշխատանքները ծրագրվում է ավարտել 20 օրվա ընթացքում: Ըստ ձեռք բերված համաձայնության, դրանց ֆինանսավորումը կատարվում է Ռուսաստանի բյուջեի հաշվին:

ՄԱԿ

Հայաստան-Իրան-Հունաստան գործակցությունը զարգացնելու միտումով

Ա. Արզումանյանի հանդիպումները Նյու Յորքում

ԵՐԵՎԱՆ, 27 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 52-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցելու առիթով Նյու Յորքում գտնվող ՀՀ արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Արզումանյանը շարունակում է աշխատանքային հանդիպումները տարբեր պետությունների պատվիրակությունների հետ:

Արտգործնախարար Արզումանյանի եւ Իրանի Իսլամական Հանրապետության արտգործնախարար դոկտոր Քամալ Խարազիի հանդիպման ընթացքում քննարկվել է հայ-իրանական տնտեսական հանձնաժողովի գործունեության աշխուժացման հարցը: Նախարարները համաձայնել են, որ հանձնաժողովի աշխատանքները պետք է նպաստեն երկու պետությունների միջեւ վերընթաց տնտեսական զարգացմանը:

Նախարար Արզումանյանը ներկայացրել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացի վերջին զարգացումները: Տարածաշրջանային խնդիրների քննարկման շրջանակում դոկտոր Քամալ Խարազին Իրանի կառավարության անհանգստությունն է հայտնել իսրայելա-թուրքական ռազմական համագործակցության կապակցությամբ:

Քննարկվել են նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանի Իրան կատարելիք այցին առնչվող հարցեր:

Այնուհետեւ Հայաստանի, Իրանի եւ Հունաստանի արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ քննարկվել են եռակողմ համագործակցության ներկա վիճակը եւ հետագա զարգացման համար անհրաժեշտ գործնական քայլերի համալիրը: Արտգործնախարարները պայմանավորվել են նպաստել փորձագետների կողմից աշխատանքային խորհրդաժողովների անցկացմանը, ինչպես նաեւ խրախուսել համագործակցության համար անհրաժեշտ իրավական դաշտի ստեղծումը:

Նախարարները վերահաստատել են համագործակցության մեջ այլ կողմերին ընդգրկելու պատրաստակամությունը:

Համագործակցության այս տարվա արդյունքները ամփոփելու նպատակով, կողմերը պայմանավորվել են երեք պետությունների արտգործնախարարների հերթական հանդիպում կազմակերպել Աթենքում՝ մինչեւ տարեվերջ:

Իրաքի արտգործնախարար Մուհամմեդ Սայիդ ալ Սահաֆի հետ հանդիպման ժամանակ ընդգծվել է Հայաստան-Իրաք երկխոսության ծավալման անհրաժեշտությունը: Նախարար Արզումանյանը ներկայացրել է Մերձավոր Արեւելքի մի շարք արաբական երկրների հետ Հայաստանի հարաբերությունների ներկա վիճակը, գնահատելով դրանք որպես բարեկամական եւ փոխշահավետ:

ՇՐՋԱՆ

«Ռուսաստանը չի հրաժարվի Հայաստանի հետ կապերից»

ԲԱԲՈՒ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Մուխալիֆաթ» թերթը տպագրել է Ռուսաստանի նախագահի խորհրդական Պաինի հարցազրույցը «Թուրան» գործակալության թղթակցի հետ: Նա ասել է, որ կովկասյան, կասպյան եւ սեւծովյան տարածաշրջաններում Ռուսաստանի դերը չի նվազում, այլ, ընդհակառակն, մեծանում է: Այդ գործընթացը տեղի է ունենում Ռուսաստանի կառավարության մեջ դիրքորոշումների ամրապնդման ու մերձեցման համապատկերի վրա:

Անդրադառնալով Անդրկովկասի երկրների հետ Ռուսաստանի փոխհարաբերություններին, Պաինը հայտարարել է, որ ոչ ԱՄՆ-ը եւ ոչ էլ որեւէ այլ երկիր չի կարող Ռուսաստանին փոխարինել Անդրկովկասում: Ասվածը նա բացատրել է տարածաշրջանին Ռուսաստանի աշխարհագրական մոտիկությամբ: Պաինն այնուհետեւ ասել է, որ եթե Ռուսաստանը որոշել է եռանդագին մասնակցել կասպյան նավթի արդյունահանման եւ փոխադրման գործընթացին, ապա նա կիրագործի իր մտադրությունները, չնայելով Չեչնիայի իրադրությանը:

Հայաստանի հետ ստորագրված համաձայնագրի առնչությամբ նա հայտարարել է, որ Ռուսաստանը չի հրաժարվի այդ երկրի հետ ունեցած կապերից, քանի որ նա ԱՊՀ-ի երկրների կոլեկտիվ անվտանգության համաձայնագրի մասնակից է: Դա միակ ռազմաքաղաքական դաշինքն է Ռուսաստանի մասնակցությամբ: Արտահայտելով իր վերաբերմունքը Ռուսաստանից Հայաստանին տրամադրվող զենքերի անօրինական մատակարարման մասին գեներալներ Ռոխլինի եւ Ռոդիոնովի արած հայտարարություններին, Պաինն ասել է, որ այդ տվյալները այնքան էլ իրական չեն: Նրա խոսքերով, նման բանակությամբ զենքի հանձնումը, ինչպես ցույց էր տրված, անհնար է տեխնիկական պատճառներով: Խորհրդականի խոսքերով, չի կարելի որպես պետական քաղաքականություն գնահատել առանձին անձանց կողմից զենքի հանձնումը Հայաստանին:

Պաինի կարծիքով, Ադրբեջանի հետ երկկողմ հարաբերություններում նավթի գործոնի դերը շատ է ուռճացված: Ադրբեջանում Ռուսաստանի համար կարեւոր է ոչ թե շուկան, ոչ թե նավթը, այլ դրացիության գործոնը: Բացի այդ, Բաքուն կարեւոր կամուրջ է Մոսկվայի եւ Անկարայի միջեւ: Թուրքիայի քաղաքական ու տնտեսական նշանակությունը շարունակ աճում է, իսկ Ադրբեջանը նրա մերձավոր զինակիցն է, եւ Ռուսաստանը, հասկանալով դա, շահագրգռված է Ադրբեջանի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմամբ:

Հանուն Ղարաբաղի Ալիեւը խաչ էլ կհամբուրի



ՎԱՏԻԿԱՆ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հռոմի պապի եւ Հ. Ալիեւի հանդիպման ժամանակ քննարկվել է նաեւ Ղարաբաղի հարցը՝ հաղորդում է «Իրանի ձայն» ռադիոկայանը: Ալիեւը փորձում է պապի դրական կարծիքը շահել Ղարաբաղի հարցում, մի քաղաքականություն, որով, ըստ ռադիոկայանի քաղաքական մեկնաբանի, միշտ էլ առաջնորդվել են Բաքվի ղեկավարները քրիստոնյա Հայաստանի հետ հակամարտությունն իրենց օգտին լուծելու նպատակով քրիստոնյա աշխարհի հովանավորությունը շահելու համար: Ահա թե ինչու Ալիեւը բարենպաստ պայմաններ է ստեղծում քրիստոնյա քարոզիչների գործունեության համար Ադրբեջանում: Նշվում է, որ մարդասիրական օժանդակությունների անվան տակ երկրում ակտիվ գործում են 20-ից ավելի քրիստոնեական եւ այլ կրոնական խմբեր: Ըստ Ադրբեջանի իշխանությունների՝ վերջին տարիներին ավելի քան 7 հազար մարդ է երկրում քրիստոնեություն ընդունել: Միեւնույն ժամանակ, ինչպես հաղորդում է «Իրանի ձայնը», Ադրբեջանի երիտասարդական ազգային խորհուրդը նախագահին ուղղած մի նամակում ուշադրություն է հրավիրել քրիստոնյա քարոզիչների գործունեությունից բխող վտանգների եւ իսլամի կործանման վրա, պահանջելով շատ միջոցներ ձեռնարկել:

Իրաքի քրդերին ռմբակոծում են եւ Իրանը, եւ Թուրքիան

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, BBC, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Իրաքի իշխանությունները մեղադրեցին Իրանին Իրաքի տարածքը ռմբակոծելու համար: Բաղդադում ԱԳՆ-ն հայտարարեց, թե այսօր առավոտյան իրանյան 8 ռմբակոծիչներ ռմբակոծել են երկրի տարածքը: Իրաքի կառավարական լրատվական գործակալությունը դա գնահատել է որպես ագրեսիա Իրաքի դեմ: Իրանից պատշաճ հաղորդագրություններ չեն ստացվել, սակայն իրանական աղբյուրը «Մոջահեդին խալք» կազմակերպությունը հայտարարեց, որ իրանյան ռազմաօդային ուժերը ռմբակոծել են Իրաքի իր հենակետերը: Ընդհանուր առմամբ Իրաքում շուրջ 30 հազար իրանցի աղբյուրը է բազավորված:

Միաժամանակ, Թուրքիայի «Անատոլու» լրատվական գործակալությունը հայտնեց, որ թուրքական ռազմաօդանավերը շարունակում են ռմբակոծել Հյուսիսային Իրաքում տեղակայված PKK-ի ճամբարները:

Երեւան կժամանի Ռումինիայի Սենատի նախագահը

ԵՐԵՎԱՆ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հոկտեմբերի 1-ին երկօրյա պաշտոնական այցով Հայաստան կժամանի Ռումինիայի խորհրդարանական պատվիրակությունը՝ Սենատի նախագահ Պետրե Ռոմանի գլխավորությամբ:

Ըստ ԱԺ մամուլի ծառայության տեղեկատվության, պատվիրակությունը Հայաստանում հանդիպումներ կունենա ՀՀ նախագահի, ԱԺ նախագահի եւ վարչապետի հետ: Նրանց կընդունի նաեւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն: Հոկտեմբերի 1-ին նախատեսվում է Ռումինիայի Սենատի նախագահի ելույթը ՀՀ ԱԺ պատգամավորների առջեւ, իսկ այցի ավարտին տեղի կունենա Ռումինիայի Սենատի եւ Հայաստանի ԱԺ նախագահի համատեղ մամուլի ասուլիսը:

Չեռնոմիրդինը եւ Պրիմակովը, հետո էլ Ելցինը Անկարա են այցելելու

ԱՆԿԱՐԱ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Կիպրոսի հունական մասին S-300 զենիթահրթիռային համալիրներ վաճառելու Ռուսաստանի մտադրության պատճառով ռուս-թուրքական հարաբերություններում ստեղծված լարվածությունը նախատեսվում է մեղմացնել առաջիկա ամիսներին կայանալիք բարձր մակարդակի շփումների միջոցով: Ռուսական դիվանագիտական աղբյուրները թուրքական «Դեյլի Նյուզ» թերթին տեղեկացրել են, թե հոկտեմբերի վերջին ակնկալվում է Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինի այցելությունը Անկարա: Նշվում է, որ նրան, ամենայն հավանականությամբ, կուղեկցի արտգործնախարար Եվգենի Պրիմակովը: «Մենք կարծում ենք, որ ռուս-թուրքական խնդիրները կարիք ունեն քննարկվելու նախագահական մակարդակով, այնպես որ մեր նախագահը եւս, ամենայն հավանականությամբ, մոտ ապագայում Անկարա կայցելի», հայտնել է ռուսաստանյան մի դիվանագետ:

Ալժիրի ահաբեկիչները սպառնում են Ֆրանսիային

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, RFI: Ֆրանսպրեսը Ալժիրից հաղորդեց, որ վերջին օրերի ընթացքում իսլամական ահաբեկիչները սպանել են շուրջ 30 մարդու: Այդ մասին այսօր տվյալներ են հրապարակվել ալժիրյան թերթերում: Թերթերից մեկում հայտնվում է, որ աշակերտների այլերի առջեւ մորթվել են 11 ուսուցիչներ: Գյուղերից մեկում ուրբաթ գիշերը սպանվել են 19 գյուղացիներ: Այդ օրվանից սկսած կառավարական զորքերը գործողություններ են սկսել «Զինված իսլամական խումբ» կազմակերպության դեմ, որը հանձն է առնում ահաբեկչությունների պատասխանատվությունը: Հինգշաբթի օրը այդ կազմակերպությունը Լոնդոնում մի կոմյունիկե է հրապարակել, որում սպառնալիքներ են պարունակվում Ֆրանսիայի հասցեին:

«Տոտալի» 2 միլիարդի համաձայնագիրը Իրանի հետ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, RFI, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Իրանն այսօր հաստատեց, որ 2 մլրդ արժողությամբ համաձայնագիր է ստորագրել ֆրանսիական նավթային «Տոտալ» ընկերության հետ, որն, ի դեպ, ռուսաստանյան «Գազպրոմի» հետ համատեղ է աշխատում: Համաձայնագիրը Պարսից ծոցի հարավում գտնվող Պարս շրջանից գազ առաքելու մասին է: Այդ հանքավայրը կարող է օրական մինչեւ 57 մլն խմ գազ առաքել: «Տոտալ» ընկերությունը վառելիքի առաքման բնագավառում Իրանի օտարերկրյա հիմնական գործընկերն է: Այդ ընկերությանը սպառնում են ամերիկյան պատժամիջոցներ, քանի որ ԱՄՆ-ի օրենսդրությունը պատժամիջոցներ է նախատեսում Իրանի նավթային եւ գազային արդյունաբերության հետ համագործակցող ընկերությունների դեմ: Այդ կապակցությամբ Ֆրանսիան այսօր ԱՄՆ-ին նախազգուշացրեց պատժամիջոցներ չկիրառել:

ԳԵՐՄԱՆԻԱ

Յելմազը տանջվի է ենթարկում Եվրամիությանը

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Թուրքիայի վարչապետ Մեսութ Յելմազն այսօր ժամանեց Գերմանիա, այդ երկրի հետ առեւտրական եւ Եվրամիության հետ ունենալիք կապերի շուրջ բանակցություններ վարելու նպատակով: Գերմանական «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե» թերթի տեղեկատվությամբ, Յելմազն ասել է, թե Եվրոպան չի կարող հուսալ, որ Թուրքիան կծառայի ՆԱՏՕ-ին որպես անվտանգության դաշնակից, երբ Անկարային հեռու է պահում Եվրամիությունից: Թուրքիայի վարչապետն ասել է նաեւ, որ եթե Եվրոպայի անվտանգության սահմանը ձգվում է մինչեւ Թուրքիայի արեւելյանը, սահման՝ զարգացման, բարգավաճման սահմանը չի կարող հասնել մինչեւ Թուրքիայի արեւմտյան սահմանը: Յելմազն ասել է, թե իր երկիրը Գերմանիայի աջակցությունն է ակնկալում Եվրամիության անդամ դառնալու հարցում: Ծրագրվում է, որ կանցլեր Հելմուտ Քոլի հետ Թուրքիայի վարչապետը կհանդիպի վաղը: Մեսութ Յելմազն ասել է, թե Թուրքիան կուզի կառավարության «որոշ թերացումները, խորացնելով ժողովրդավարությունն ու անհատական իրավունքները»:

ԱԶԳ **տեղական**

110

Հայկական կոնյակը փորձում է ավանդական շուկաները վերանվաճել

1887-ին Երեւանում. վաճառական Ներսես Թաիրովի գինու գործարանում. 102.5 դույլ տարողությամբ ոյղնձե ստուգիչ սարքով կատարվեց կոնյակի սոլիրտի փորձնական բորում. որը եւ հիմք դարձավ Հայաստանում կոնյակի արտադրության: Արդեն իսկ 1890-1900-ին Երեւանը դառնում է կոնյակի արտադրության խոշոր կենտրոն. ուր տեղակայված էին Գյոզալովի (1892). Սարաջեւի (1894). Տեր-Մկրտչյանի (1889) եւ այլոց գործարանները: 1899-ին Ն. Թաիրովն իր գործարանը վաճառում է Ն. Շուստովի Ռուսաստանում ճանաչված ֆիրմային: Վերջինս վերստահավորում է գործարանը. եւ կոնյակի արտադրությունը դնում նոր հիմքերի վրա: 1914-ին Երեւանի նահանգում գործում էին 15 գործարան. որոնք արտադրել են 210 հազար դեկալիտրից ավելի կոնյակ:

Այսօր արդեն Երեւանի կոնյակի գործարանը կամ այլ բառերով՝ կոնյակի արտադրությունը Հայաստանում 110 տարեկան է: Հատկանշական է. որ 1996-ին արտադրված խմիչքի ծավալը գրեթե չէր գերազանցում 1914-ի նշված ցուցանիշը: Անցյալ տարի Երեւանի կոնյակի գործարանը թողարկել է «ընդամենը» 250 հազար դեկալիտր կոնյակ:

Միեւնույն ժամանակ. 1997-ի անցած. ժամանակահատվածում արդեն արտադրվել է ավելի քան 250 հազար դեկալիտր խմիչք. եւ համարձակվում կարելի է ենթադրել. որ մինչեւ տարեվերջ երեւանյան գործարանում արտադրվել է շուրջ 350 հազար դեկալիտրի (6-7 միլիոն շիշ) արտադրություն: Ինչպես նշում է գործարանի գործադիր տնօրեն Ալբերտ Հերոյանը. հարկային ոլորտում ակցիզային դրոշմանիշների առկայության դայմաններում հայկական շուկայում ավելի քան 3 անգամ աճել է սպառման գործակիցը. եթե 1996-ին հանրապետության տարածքում սպառվել է շուրջ 120 մլն դրամի խմիչք. ապա միայն 1997-ի սեպտեմբերին կազմել է մոտավորապես 70 մլն դրամ: Ներկայումս գործարանը արտադրում է 17 տեսակի կոնյակ՝ 12 անվանական եւ 5 աստղավոր: Նախապատվությունն այսօր տրվում է անվանական նոր տեսակի արտադրությունների զարգացմանը. հանգի. որ «Վարդան Ուզունյանը 1988-89-ին. դայմանագրային կարգով. գործարանից 3000 դեկալիտր կոնյակ է տեղափոխել եւ մինչեւ անցյալ տարի էլ «կատարում է ռոզլիվ»: Սակայն դա հայկական կոնյակի անուն չէր. եւ մենք այդ ուղղությամբ տարանք ահագին աշխատանք կարողացանք մեր շուկան փակել: Այսօր չգիտեմ աշխատո՞ւմ է այդ արտադրությունը. թե՞ չի աշխատում»: Նշենք. որ «Նոյակի» «ռոզլիվ չի կատարվում» արդեն շուրջ 5 տարի. եւ այն հանգամանքը. որ Մոսկվայի «Բերեզկա» խանութների ցանցում մինչ օրս վաճառվում է «Նոյակը». դեռ չի վկայում խմիչքի արտադրության մասին: Ի դեպ. միշ անհասկանալի է. թե ինչ է նշանակում «Նոյակի» ոչ հայկական անվանումը... Եթե համակերպվելու լինենք «Կոնյակ» անվանման հայկական դատկանելության հետ. ապա «Նոյակը» առնվազն քան հայկական է... Ինչեւէ: Գործարանն այսօր դրված է միջազգային աճուրդի. եւ դա. ըստ Ալբերտ Հերոյանի. «մեկ հարվածով երկու նաղլաստակ խփելու» դեպ մի հաջողակ բան է. «Վերջ ի վերջո. գործարանը անիվների վրա չեն կարող տեղափոխել արտասահման»:

Երկու բառով բնակչության զբաղվածության մասին. բուն գործարանի տարածքում այսօր աշխատում է շուրջ 250 հոգի. հանրապետության մասնաճյուղերում՝ 700. իսկ աշխարհում՝ ներկայացուցիչների անձնակազմի հետ համատեղ մոտավորապես 1500 աշխատակից: Բոլորը հայաստանցի են նվազագույնը 200 դոլարի համարժեք աշխատավարձով: Ներկայումս աշխարհում գործում են տրեսի 17 ներկայացուցչություններ. որոնց միջոցով գործարանի արտադրանքը մուտք է գործում ոչ միայն ԱՊՀ երկրներ. այլ նաեւ ԱՄՆ. Գերմանիա. Իսրայել եւ այլ դետություններ:

Այսօր արդեն հայտնի կդառնան համտեսների մրցույթին ներկայացված կոնյակների վարկերը. Հայաստան ժամանած ԱՊՀ յոթ այլ գործարանների ներկայացուցիչները (Օդեսա. Սամարղանդ. Բիշքեկ. Տիրասպոլ եւ այլն). երեկ դետք է հայտնեին իրենց համադասասխան եզրակացությունները: Հայաստանը ներկայացրել է 5 տեսակի կոնյակ... Սդասենք արդյունքներին...

Ա. Ղ.

ՄԻՋԴԵՏԱԿԱՆ ԲԱՆԿ

Միայն դեսական խոշոր ծրագրեր

ԱՊՀ 10 երկրների կառավարությունների եւ կենտրոնական բանկերի միջեւ կնքված համաձայնագրով 1993 թ. հունվարի 22-ից ստեղծված Միջդետական բանկը երեկ նշեց իր ներկայացուցչության բացումը Հայաստանում: Նա ժամանակավորապես տեղակայված կլինի ՀՀ կենտրոնական բանկի շենքում: Այդ առթիվ Արմենիա հյուրանոցում կազմակերդված շնորհանդեսի ժամանակ առեւտրի եւ զբոսաշրջության նախկին նախարար. այժմ՝ Միջդետական բանկի ներկայացուցիչ Վահան Մելքոնյանը հայտնեց. որ բանկը մեծ հեռանկարներ ունի: Սա միջազգային կազմակերդություններից է. որոնք ավանդաբար տեղայնացվում են որեւէ երկրում: Այս դեդքում՝ Ռուսաստանի Դաշնությունում. որտեղ այնքան մեծ արտոնություններ են ստեղծված. որ դայմանները գրեթե օֆշորային են: Բանկը չի վճարում ոչ մի հարկ. ոչ մի տուրք եւ ազատ է ամեն տեսակ վերահսկողությունից: Վերոնշյալ երկրների շարքում բացակայում է միայն Ադրբեջանի անունը: Սակայն սա ինքնուրույն կառույց է եւ ենթակա չէ ԱՊՀ տնտեսական օղակներին:

ՀՀ ԿԲ մասնաբաժինը Միջդետական բանկի հիմնադիր կադիտալում. որը մոտ 40 մլն դոլար է. կազմում է գրեթե 2 տոկոս: ՌԴ եւ Ուկրաինայի բաժինները համադատասխանաբար 50 եւ 14 տոկոս են. որ դարզադես կադված է ազգային եկամտի հետ: Վերջին տարվա ընթացքում ինտենսիվորեն զարգանալով՝ բանկը կրկնադատկել է իր ակտիվները: Այն բազմակողմանի ուղղվածության հաստատություն է. որ իրականացնում է ֆինանսական գործառույթների ողջ ստեկտրը: Միջդետական բանկը ուղղված է համագործակցության շրջանակում արդյունավետությամբ լուծելու վճարահաշվարկային հարաբերությունների խնդիրները եւ զարգացնելու անդամ երկրների վարկային եւ ներդրումային գործունեությունը: Այս առթիվ բանկի նախագահ Վ. Մաշիցը հույս հայտնեց. որ բանկը «կօգնի հայ ժողովրդին ավելի լավ ադրել»: Կարծես լրացնելով՝ Վ. Մելքոնյանը հայտարարեց. որ բանկն ունի շահեր 10 երկրներում միասին եւ առանձին վերցրած: Իսկ բանկի խնդիրները Հայաստանում դարզ են բոլորին. այն եկել է Հայաստանին առաջարկելու իր օգնությունը. իհարկե՝ ոչ անվճար: Միջդետական բանկն. իհարկե. «չի իջնելու մինչեւ ֆիզիկական անձանց սդասարկելու մակարդակը. կմասնակցի դետական խոշոր ծրագրերին»: Այս դահին դրանք ընդամենը մի քանիսն են. բայց մոտ ադագայում. հենց այս տարի. գործունեությունը կընդլայնվի: Կխթանվեն գլխավորապես Հայաստանի համար կարեւոր նշանակություն ունեցող ասդարեզները. ինչդես օրինակ էներգետիկայի արտահանման զարգացման ծրագրերը: Վերջինս Հայաստանում չափազանց անմխիթար վիճակում է:

Արդյո՞ք սա Համաշխարհային բանկին հակադրվելու փորձ է հարցին՝ նորընծա կառավարիչը դատասխանեց. որ խոսքն ավելի շուտ ԱՄՆ դոլարի կողմին հայկական դրամի եւ ռուսական ռուբլու համարժեք գործընկերության տարածություն գտնելու մասին է: Այդ տարածությունն օբյեկտիվորեն կա եւ դետք է հայտնաբերել:

Ա. Գ.

Պ. Սիբեն. «Հայաստանում վերականգնողական առողջության նոր ծրագրի բոլոր դայմանները կան»

Մեկշաբաթյա այցով Հայաստան է ժամանել Ալբանիայում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ԲՀ) ներկայացուցիչ. Բուլղարիայում. Հայաստանում. Վրաստանում վերականգնողական առողջության ծրագրի տնօրեն Պիր Սիբենը: Նա մասնակցեց ՀՀ առողջապահության նախարարության դերինատալոգիայի. մանկաբարձության եւ գինեկոլոգիայի կենտրոնում անցկացվող սեմինարին. որն առաջինն էր վերականգնողական առողջության ազգային ծրագրի շրջանակում (տես. «Ազգ». 24 սեպտեմբերի): Պարոն Սիբենի առաքելության գլխավոր խնդիրներից էին հանդիդումները ծրագրի հետ աշխատող հայաստանյան կազմակերդությունների. ինչդես եւ ՀՀ առողջապահության նախարարի հետ՝ քննարկելու առաջիկա անելիքները: Ծրագրի առաջին փուլը. որ հաստատվել էր այս տարվա սկզբին. կավարտվի 98-ի վերջին. ուստի անհրաժեշտ է արդեն ճշգրտել հետագա քայլերը: Առաքելությունը նդատակ ունի նաեւ համակարգելու այն բոլոր միջոցառումները. որ նախաձեռնում են տարբեր կազմակերդությունները. ուսումնասիրելու՝ ինչ է արվում հանրապետությունում: Գնահատելով վերարտադրողական առողջության առկա իրավիճակը Հայաստանում. համակարգողը նկատեց. որ այս ասդարեզում անելիք շատ կա: Արհեստական վիժումների թիվը չափազանց մեծ է. արձանագրվում է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների աննախադեպ աճ. ներառյալ ԴԱՎ-ը (դիմադրողականության անկման վարակ): Այս արագընթաց զարգացումը մեկ-երկու տարի հետո կարող է հանգեցնել մի իրադրության. երբ ահռելի ծախսերով անգամ հնարավոր չի լինի իրականացնել բուժումը: Նդատակահարմար է կանխարգելիչ միջոցառումներ սկսել արդեն այսօր: Փորձագետի կարծիքով. Հայաստանն այն սակավաթիվ երկրներից է. ուր լիովին գիտակցում են վերարտադրողական առողջության հիմնադրույթներն ու ընդունակ են իրագործելու դրան ուղղված միջոցառումները ողջ ծավալով: Սա. որ ինքնին կդառնա այժմ ընթացքի մեջ գտնվող ծրագրի երկրորդ փուլը. բավանակաչափ ծախսերի հետ է կադված: Դետք է կատարել հսկայական նախնական աշխատանք. կազմել նախագիծ. տեղաբաշխել միջոցառումները. դատրաստել մեծաթիվ փաստաթղթեր. կատարել բազմաթիվ հեռազրուցներ նոր տվյալներ ձեռք բերելու համար: Ծրագիրն իրագործելու կադակցությամբ ՄԱԿ ԲՀ-ն մտադիր է դիմել զանազան դոնոր կազմակերդությունների. երկրների: Թե ինչդես կնախընտրեն նրանք կատարել հատկացումները. ինչ գործակալների միջոցով՝ իրենց խնդիրն է: Իսկ ԲՀ-ն սեփական միջոցները ծրագրերի կատարման է ուղղում Առողջապահության համաշխարհային կազմակերդության միջոցով: Ուստի նդատակահարմար է գտնում. որ ծրագրի բժշկագիտական կառավարումն ու վերահսկումն իրականացնի հիշյալ կազմակերդությունը: Սրա համար անհրաժեշտ կլինի. որ տեղում մշտապես աշխատի կազմակերդության խորհրդականը: Այդ ամենից առաջ. սակայն. հարկավոր է ՀՀ առողջապահության նախարարության հավանությունը: Բնակչության հիմնադրամն առաջարկել է վերարտադրողական առողջության իրենց մշակած հայեցակարգը նախապես քննության առնել ՀՀ առողջապահության նախարարությանն առընթեր համակարգող կոմիտեում: Դրանից հետո միայն ԲՀ-ն մասնագիտական խումբ կուղարկի սկսելու աշխատանքները: Հաջորդ փուլի շուրջ կոնկրետ դայմանավորվածություն դեռ ձեռքբերված չէ. սակայն ՀՀ բարյացկամությունը նկատելի է: Ենթադրվում է ծրագրի մեջ ներառել խնդրին առնչվող բոլոր դետական. ոչ դետական կառույցները. այդ թվում Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների հանրապետական դիսպանսերը. ԴԱՎ-ի կենտրոնը. այլ հիվանդանոցային համակարգեր:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թող 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարվածքը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» դարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Ի գիտություն ՀՌԱԿ Երեւանի «Կենտրոն» շրջանակի դատգամավորների

Հայտնվում է Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Երեւան քաղաքի «Կենտրոն» շրջանակի՝ «Վան», «Լեռ», «Զարթոնք», «Բաբաջանյան», «Համերաշխություն», «Զատել Եսայան», «Կենտրոն», «Երեւան», «Արմենական» ակումբներից ընտրված դատգամավորներին. որ «Կենտրոն» շրջանակի Դատգամավորական ժողովը տեղի կունենա հոկտեմբերի 1-ին. ժամը 14:00-ին (Կորյունի 19ա) ՀՌԱԿ Կենտրոնական գրասենյակում հետեւյալ օրակարգով:

1. «Կենտրոն» շրջանակի վարչության հաշվետվությունը:
2. Նոր վարչականների ընտրություն:
3. ՀՌԱԿ կանոնադրության մեջ մասնակի փոփոխությունների մասին:
4. ՀՌԱԿ 7-րդ Դատգամավորական ժողովի դատգամավորների ընտրություն:

Ժողովին կարող են մասնակցել նաեւ ՀՌԱԿ մյուս շրջանակների եւ ակումբների ներկայացուցիչներ:

ՀՌԱԿ ԵՐԵՎԱՆԻ «ԿԵՆՏՐՈՆ» ՇՐՋԱՆԱԿԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐՈՍ

Վանաձորում նշվեց ԱԻՄ-ի 10-ամյակը

1987-ի սեպտեմբերի 27-ին Ազգային միացյալ կուսակցության անդամներ Պարույր Հայրիկյանը. Մովսես Գորգիսյանը. Մեխակ Գաբրիելյանը. Սուսաննա Ավագյանը եւ Ռազմիկ Մարկոսյանը ստեղծեցին ԱԻՄ-ը: Անցած շաբաթ օրը Վանաձորի ԱԻՄ-ի «Նժդեհ» գրասենյակում հանդիսավորությամբ նշվեց տասնամյա հոբելյանը: Մասնակցում էին եւ մաղթանքի խոսքեր ասացին տարբեր կուսակցությունների. մշավորականության. լրատվամիջոցների ներկայացուցիչներ: ԻՄ փոխխոսնակ. Լոռվա մարզային կազմակերդության ղեկավար Գագիկ Մարիկյանը. ինչդես նաեւ ներկաներից շատերը կարեւորեցին. անկախ մայրաքաղաքում տեղի ունեցող իրադարձություններից. տեղերում բոլոր կուսակցությունների միասնությունը:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ
Վանաձոր

ՀՕՖ-ի միջոցներով Վայոց Ձորի մարզում շարք մտավ նոր ջրագիծ

ԵՐԵՎԱՆ. 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վայոց Ձորի մարզի Արենի գյուղում կիրակի օրը՝ սեպտեմբերի 28-ին. Ամենայն հայոց Գարեգին Ա կաթողիկոսի մասնակցությամբ. բացեց Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդի միջոցներով կառուցված 5-կիլոմետրանոց նոր ջրագիծը: Սա խմելու ջրով կադահովի գյուղի բնակչության մի սվար հատվածի. ինչդես նաեւ թույլ կտա բնակելի դարձնել նոր հողատարածքներ: Սա մարզում ՀՕՖ-Ի իրականացրած գյուղատնտեսական միակ ծրագիրը չէ. Արմենդրեսի թդքակցին ասացին ֆոնդի գրասենյակում. անցյալ տարի այս ժամանակ. դարձյալ ՀՕՖ-ի աջակցությամբ. շահագործման հանձնվեց Նորավանք-Ռինդ ինքնահոս ջրատարը:

ԱԶԳ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Նորից դեկտեմբեր է գալիս, եւ ԵԱՀԿ նոր վեհաժողովում, անշուշտ, արծարծվելու է նաեւ այն հարցը, թե ի՞նչ է արվել արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման մասին նախորդ վեհաժողովի տված հանձնարարականների կատարման ուղղությամբ: Առ այսօր, ինչպես հավաստեց նաեւ ՀՀ նախագահը մամուլի ասուլիսում, որեւէ էական առաջընթաց ձեռք չի բերվել:

Այսպիսի «բեռով» նոր վեհաժողովի գնալը ոչ մեկին, հասկանալի է, պատիվ չի բերում, մանավանդ հանանախագահ երկրների ղեկավարների դենվերյան հայտարարության համապատկերում, ուստի բնական է, որ միջնորդները այժմ ուղղակի տենդի մեջ են եւ շատում են գոնե «մի բան անել», որպեսզի հաշվետվության պահին չափազանց դժգույն չերեւան: Այստեղից է գալիս մինչեւ տարեվերջ «հակամարտության կարգավորմանը հասնելու» նրանց «վճռական» կեցվածքը, եւ ստեղծված պայմաններում դա առնվազն անհամոզիչ է, քանզի եթե մինչեւ տարեվերջ նույնիսկ առագա բանակցությունների հիմքը գտնվի՝ էլի մեծ առաջընթաց կլինի:

ՀՀ նախագահը հավաստեց, որ Մինսկի խմբի եռանախագահները հակված են հարցի փուլային լուծման տարբերակին: Այս առթիվ տպավորությունն այն է, որ բանակցություններում, եթե դրանք վերջ ի վերջո սկսվեն, ինքնակվելու են սկզբում այսպես կոչված «գրավյալ տարածքների» վերադարձման (ներառյալ Լաչինի միջանցքը), անվտանգության գոտիների ստեղծման, այդ գոտիներում խաղաղարար ուժերի տեղաբաշխման եւ միայն այս ամենից հետո Ղարաբաղի կարգավիճակի հարցերը:

Նախագահն ընդգծեց, թե նույնիսկ այս «մեթոդոլոգիայի» առթիվ հայկական կողմը «լուրջ վերապահումներ ունի», առանց, սակայն, բացելու փակագծերը: Չգիտեմ ի՞նչ վերապահումների մասին է խոսքը, բայց կարծում եմ, որ դրանք, առնվազն, պետք է վերաբերեն հարցերի հերթականությանը եւ ենթադրյալ խաղաղարար ուժերի կազմին: Եթե մենք համաձայնենք, որ Ղարաբաղի կարգավիճակի հարցը ինքնակվի ամենավերջում (Ռուսաստան-Չեչնիա հակամարտության օրինակով), ապա հազիվ թե կարելի է հուսալ, որ իր տարածքները ետ ստանալուց հետո Ադրբեջանը հակված կլինի լրջորեն ինքնակելու ԼՂՀ կարգավիճակի հարցը: Այսօր Իսրայելը արաբական աշխարհին պարտադրում է «տարածքներ՝ խաղաղության փոխարեն» կարգախոսը: Ինչո՞ւ մենք չենք կարող որդեգրել «տարածքներ՝ կարգավիճակի փոխարեն» կեցվածքը: Ըստ նախագահի՝ այդ դեպքում «միջազգային հանրությունը կգտնի ձեւեր, միջոցներ այնքան խեղճացնելու մեզ, որ... կարող ենք շատ ավելի վատ վիճակի մեջ ընկնել»: Ինչո՞ւ: Որովհետեւ միջազգային հանրությունը թույլ չի տա, որ «եւս 20-30 տարի պահպանվի այս վիճակը»: Այդ դեպքում ինչո՞ւ նույն միջազգային հանրությունը 23 տարի հանդուրժում է Կիպրոսի իրավիճակի պահպանումը: Ինչո՞ւ պատժամիջոցներ չի կիրառում Իսրայելի դեմ, որն արդեն 50 տարի պայթեցնում է մերձավորարեւելյան տարածաշրջանի խաղաղությունը՝ առ ոչինչ համարելով թե պաղեստինյան պետության ստեղծման մասին ՄԱԿ-ի կեսդարյա վաղեմության որոշումը, թե հեսագա պատերազմներում արաբներից խլած հողերի վերադարձման մասին ՄԱԿ-ի բանաձեւերը: Այս «ինչուների» պատասխաններն, իհարկե, կան, ես միայն ուզում եմ հուշել, որ այդպիսի նախադեպեր կան եւ մենք էլ կարող ենք ինչ-ինչ ձեւերով հասնել արցախյան հարցի «կիպրացմանը»: Երկրորդ՝ ովքե՞ր են լինելու միջազգային խաղաղարարները արցախյան հակամարտության գոտում: Եթե նրանք լինեն նույնիսկ միմիայն մեր բարեկամները (ինչը խիստ կասկածելի է), ապա նրանք, միեւնույն է, սոսկ հեռածգելու են պատերազմը եւ երբեմ չեն լուծելու հարցը:

Հաջորդ նկատառումը: Նախագահը, իմ տպավորությամբ, պարզապես հուսահատ վիճակի մեջ է, քանի որ հակամարտությունը ներկայացվում է իբրեւ «հայ-ադրբեջանական տարածքային վեճ»: Հարկավոր է քաջություն ունենալ եւ աշխարհի երեսին շրջել ճշմարտությունը՝ սա Հայաստանի եւ Ադրբեջանի տարածքային վեճ չէ, սա սրկության դեմ ոտքի ելած արցախահայության ազգային-ազատագրական պատերազմն է ադրբեջանական բռնության դեմ, որը Բաքուն փորձում է խեղդել արյան մեջ: Այդ նա՝ եր, որ հրով ու սրով եկավ Արցախի վրա եւ, որպես ագրեսոր, ջախջախիչ պարտություն կրեց, կորցրեց տարածքներ: Համաշխարհային պատմության մեջ ե՞րբ է եղել, որ պարտություն կրած ագրեսորը որեւէ պատիժ չի կրել: Ո՞րն է Ադրբեջանի «պատիժը» մեր պարագայում:

Ես, իհարկե, հասկանում եմ, որ այս հարցը կարելի է բարձրացնել միայն խաղաղության բանակցություններն սկսելու դեպքում: Բայց ես չեմ ուզում, որ Հայաստանը այդ բանակցություններին գնա նախագահի հոռետեսական տրամադրությամբ, ինչը ինքն էլ հրապարակավ խոստովանեց («Ես հոռետես եմ մեծ հաշվով»):

Կուզենայի ընդգծել, որ այդ բանակցությունները որքան մեզ, գուցե կրկնակի Ադրբեջանին են պետք, խաղաղ կարգավորումն առավել եւս: Եթե մինչեւ «Քաղաքական մեծ համաձայնագրի» ստորագրումը մենք իրոք տուժել եւ տուժելու ենք շրջափակումներից, չենք դառնալու բարեկեցիկ պետություն եւ այլն, եւ այլն, որն ամեն կերպ փորձում էր հայ հասարակական գիտակցության մեջ ամրագրել ՀՀ նախագահը, ապա չպիտի մոռանանք, որ դրանից շատ լրջորեն տուժել ու տուժելու է նաեւ Ադրբեջանը, որն իր «մեծ նավթը» վաճառքի հանելու ոչ մի իրական երաշխիք չի ստանալու, քանի դեռ արցախյան հարցը չի լուծվել:

Ասելիքս այն է, որ հարկավոր է... չվախենալ համառելուց:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԱՐԱԲԱԳԻ ՀԱՐԾ

«Համաշխարհային հանրությունը» երկընտրանք չունի

վի գնալը ոչ մեկին, հասկանալի է, պատիվ չի բերում, մանավանդ հանանախագահ երկրների ղեկավարների դենվերյան հայտարարության համապատկերում, ուստի բնական է, որ միջնորդները այժմ ուղղակի տենդի մեջ են եւ շատում են գոնե «մի բան անել», որպեսզի հաշվետվության պահին չափազանց դժգույն չերեւան: Այստեղից է գալիս մինչեւ տարեվերջ «հակամարտության կարգավորմանը հասնելու» նրանց «վճռական» կեցվածքը, եւ ստեղծված պայմաններում դա առնվազն անհամոզիչ է, քանզի եթե մինչեւ տարեվերջ նույնիսկ առագա բանակցությունների հիմքը գտնվի՝ էլի մեծ առաջընթաց կլինի:

ՀՀ նախագահը հավաստեց, որ Մինսկի խմբի եռանախագահները հակված են հարցի փուլային լուծման տարբերակին: Այս առթիվ տպավորությունն այն է, որ բանակցություններում, եթե դրանք վերջ ի վերջո սկսվեն, ինքնակվելու են սկզբում այսպես կոչված «գրավյալ տարածքների» վերադարձման (ներառյալ Լաչինի միջանցքը), անվտանգության գոտիների ստեղծման, այդ գոտիներում խաղաղարար ուժերի տեղաբաշխման եւ միայն այս ամենից հետո Ղարաբաղի կարգավիճակի հարցերը:

Նախագահն ընդգծեց, թե նույնիսկ այս «մեթոդոլոգիայի» առթիվ հայկական կողմը «լուրջ վերապահումներ ունի», առանց, սակայն, բացելու փակագծերը: Չգիտեմ ի՞նչ վերապահումների մասին է խոսքը, բայց կարծում եմ, որ դրանք, առնվազն, պետք է վերաբերեն հարցերի հերթականությանը եւ ենթադրյալ խաղաղարար ուժերի կազմին: Եթե մենք համաձայնենք, որ Ղարաբաղի կարգավիճակի հարցը ինքնակվի ամենավերջում (Ռուսաստան-Չեչնիա հակամարտության օրինակով), ապա հազիվ թե կարելի է հուսալ, որ իր տարածքները ետ ստանալուց հետո Ադրբեջանը հակված կլինի լրջորեն ինքնակելու ԼՂՀ կարգավիճակի հարցը: Այսօր Իսրայելը արաբական աշխարհին պարտադրում է «տարածքներ՝ խաղաղության փոխարեն» կարգախոսը: Ինչո՞ւ մենք չենք կարող որդեգրել «տարածքներ՝ կարգավիճակի փոխարեն» կեցվածքը: Ըստ նախագահի՝ այդ դեպքում «միջազգային հանրությունը կգտնի ձեւեր, միջոցներ այնքան խեղճացնելու մեզ, որ... կարող ենք շատ ավելի վատ վիճակի մեջ ընկնել»: Ինչո՞ւ: Որովհետեւ միջազգային հանրությունը թույլ չի տա, որ «եւս 20-30 տարի պահպանվի այս վիճակը»: Այդ դեպքում ինչո՞ւ նույն միջազգային հանրությունը 23 տարի հանդուրժում է Կիպրոսի իրավիճակի պահպանումը: Ինչո՞ւ պատժամիջոցներ չի կիրառում Իսրայելի դեմ, որն արդեն 50 տարի պայթեցնում է մերձավորարեւելյան տարածաշրջանի խաղաղությունը՝ առ ոչինչ համարելով թե պաղեստինյան պետության ստեղծման մասին ՄԱԿ-ի կեսդարյա վաղեմության որոշումը, թե հեսագա պատերազմներում արաբներից խլած հողերի վերադարձման մասին ՄԱԿ-ի բանաձեւերը: Այս «ինչուների» պատասխաններն, իհարկե, կան, ես միայն ուզում եմ հուշել, որ այդպիսի նախադեպեր կան եւ մենք էլ կարող ենք ինչ-ինչ ձեւերով հասնել արցախյան հարցի «կիպրացմանը»: Երկրորդ՝ ովքե՞ր են լինելու միջազգային խաղաղարարները արցախյան հակամարտության գոտում: Եթե նրանք լինեն նույնիսկ միմիայն մեր բարեկամները (ինչը խիստ կասկածելի է), ապա նրանք, միեւնույն է, սոսկ հեռածգելու են պատերազմը եւ երբեմ չեն լուծելու հարցը:

Հաջորդ նկատառումը: Նախագահը, իմ տպավորությամբ, պարզապես հուսահատ վիճակի մեջ է, քանի որ հակամարտությունը ներկայացվում է իբրեւ «հայ-ադրբեջանական տարածքային վեճ»: Հարկավոր է քաջություն ունենալ եւ աշխարհի երեսին շրջել ճշմարտությունը՝ սա Հայաստանի եւ Ադրբեջանի տարածքային վեճ չէ, սա սրկության դեմ ոտքի ելած արցախահայության ազգային-ազատագրական պատերազմն է ադրբեջանական բռնության դեմ, որը Բաքուն փորձում է խեղդել արյան մեջ: Այդ նա՝ եր, որ հրով ու սրով եկավ Արցախի վրա եւ, որպես ագրեսոր, ջախջախիչ պարտություն կրեց, կորցրեց տարածքներ: Համաշխարհային պատմության մեջ ե՞րբ է եղել, որ պարտություն կրած ագրեսորը որեւէ պատիժ չի կրել: Ո՞րն է Ադրբեջանի «պատիժը» մեր պարագայում:

Ես, իհարկե, հասկանում եմ, որ այս հարցը կարելի է բարձրացնել միայն խաղաղության բանակցություններն սկսելու դեպքում: Բայց ես չեմ ուզում, որ Հայաստանը այդ բանակցություններին գնա նախագահի հոռետեսական տրամադրությամբ, ինչը ինքն էլ հրապարակավ խոստովանեց («Ես հոռետես եմ մեծ հաշվով»):

Կուզենայի ընդգծել, որ այդ բանակցությունները որքան մեզ, գուցե կրկնակի Ադրբեջանին են պետք, խաղաղ կարգավորումն առավել եւս: Եթե մինչեւ «Քաղաքական մեծ համաձայնագրի» ստորագրումը մենք իրոք տուժել եւ տուժելու ենք շրջափակումներից, չենք դառնալու բարեկեցիկ պետություն եւ այլն, եւ այլն, որն ամեն կերպ փորձում էր հայ հասարակական գիտակցության մեջ ամրագրել ՀՀ նախագահը, ապա չպիտի մոռանանք, որ դրանից շատ լրջորեն տուժել ու տուժելու է նաեւ Ադրբեջանը, որն իր «մեծ նավթը» վաճառքի հանելու ոչ մի իրական երաշխիք չի ստանալու, քանի դեռ արցախյան հարցը չի լուծվել:

Ասելիքս այն է, որ հարկավոր է... չվախենալ համառելուց:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սովորական հարցեր՝ անսովոր ասուլիսում

Իհարկե, 5 տարի մամուլի ասուլիս չտալուց հետո, երկրի նախագահի՝ նման մասշտաբի հանդիպումը ենթադրում էր երեւույթ դառնալ եթե ոչ քաղաքական, ապա գոնե լրագրողական կյանքում: Բայց «երկար սպասված» ասուլիսը վերածվեց մի շոուի, ուր լրագրողները, մոռացած հրատապ հարցերը, անցան խոհափիլիսոփայական երկխոսության: Թեեւ դա երկխոսություն էլ չենք կարող անվանել, քանզի ամեն լրագրող 1 հարցի իրավունք ուներ եւ չէր կարող առնվազն երկրորդ հարցով վիճարկել նախագահի պատասխանը՝ անկախ նրանից, իրեն գոհացնում էր, թե ոչ: Ըստ էության այդ դերը պետք է սանձնեին հենց իրենք լրագրողները: Պետք է մեկը մյուսին լրացներ: Մյուս կողմից, ընդհանուր մթնոլորտն այնքան շինծու է լինում նման միջոցառումների ժամանակ, որ նույնիսկ սուր հարցը կորչում է, լուծվում ավելորդաբանությունների մթնոլորտում: Իսկ որոշ լրագրողներ կաշկանդվում են կամ սիրալիր ողջույններ հղում: Այստեղ ես հիշում եմ մեր օրինակը, երբ, ապրիլ ամսին, մի խումբ լրագրողներով նախագահական ապարատում հանդիպարարից, ոտքի վրա Լեւոն Տեր-Պետրոսյանին ուղղեցինք ամենասուր եւ միգուցե ոչ դուրեկան հարցեր եւ ստացանք նույնքան կտրուկ պատասխաններ: Եվ դա ունեցավ հասարակական լայն արձագանք:

Այս պարագայում, ամենախելոքը ձեւանալու բնազդը չլքեց հայ լրագրողներին:

Իհարկե, ինձ իրավունք չեմ վերապահում խրատելու այս կամ այն լրագրողին, մանավանդ որ ինքս էլ վերջին ասուլիսի մասնակից էի, բայց մի դիտողություն չեմ կարող չանել: Շատ բան այս ծրագրում ամենեւին կախված չէ նախագահի անձից: Եվ նրան սուր հարց տալու հնարավորությունը ինքնին ապահովված էր: Ավելին, թվում էր՝ Տեր-Պետրոսյանն ինքն էլ շահագրգռված էր լսելու նման հարցեր: Իհարկե, նաեւ սխալ է կարծել, թե սուր եւ տեղին հարցը ինքնանպատակ պետք է լինի: Ի վերջո, դա յուրաքանչյուրի իրավունքն է: Բայց հետաքրքիր էր Տեր-Պետրոսյանի կեցվածքը առ լրագրողներս: Նրա հեգնական կարծիքով, «Լրագրողները հիմա ամենաաջ, ամենահերոս մարդիկ են մեր հասարակության մեջ: Ավելի քաջը չկա: Ում ուզում եք՝ հայհոյում եք, ում ուզում եք՝ սուզում եք, ում ուզում եք՝ խայտառակում եք»: Ցավոք, այդ քաջության չափը ասուլիսում չերեւաց: Մյուս կողմից, նախագահը նաեւ դժգոհեց, այս անգամ չկենտրոնանալով լրագրողների վրա, այլ ընդհանրացնելով. «Եթե Հայաստանում կամ հայ ժողովրդի մոտ տեղի է ունենում մի լավ բան, անմիջապես գտնվում են չարախնդացողներ, անմիջապես գտնվում են մարդիկ, որոնք նսեմացնում են այդ գործունեությունը»: Իհարկե, սա ամենահետաքրքիր ձեւն է, սխալներն ու բացթողումները անտեսել եւ դրանք բարդել լրագրողների կամ այլ մարդկանց վրա, նրանց համարելով «թերարժեքության բարդույթով» տառապողներ:

Եվ այն էլ որ հարցում՝ «Հայաստան» հիմնադրամի: Ես չգիտեմ ով եւ ինչպես, բայց գոնե «Ազգը» Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի շինարարությունը կարեւորել է, քաջալերել է հենց առաջին իսկ մետր շինարարությունից մինչ օրս: Ինչ վերաբերում է բուն հիմնադրամին, բնականաբար, անսխալական կառույց չկա: Եվ եթե որեւէ բան այնպես չէ հիմնադրամում, պետք է հնարավորին չափ շուտ ուղղել, ոչ թե նեղացածի կեցվածքով պիտակներ կպցնել:

Եվ ընդհանրապես, եթե երկրի նախագահը ակնկալում է, որ լրագրողները լուրջ խոսակցություն ծավալեն Ղարաբաղի հարցում փոխզիջումներ գտնելու համար, ապա գոնե պետք է ասի, թե այդ լրագրողների կարծիքները որքանով են հաշվի առնվում: Թե խորհրդարանական եւ թե նախագահական ընտրությունների ժամանակ բազմիցս գրվեց թույլ տրված կեղծիքների մասին: Ո՞վ լսեց [illegible] բանակցային գործընթացում հաշվի առնեն փոխզիջումներ անելու մասին լրագրողների մեկնաբանությունները:

Կամ որքանով են այդ բանակցությունների խոհանոցին տեղեկացված լրագրողները, որ լուրջ խորհուրդներ տան կամ վերլուծություն անեն եւ կամ ժողովրդին համոզեն:

Այս լրագրողական հիասթափությունն էր նաեւ պատճառը, որ սուր հարցեր չհնչեցին, իսկ եթե անգամ հնչեցին, սպառիչ պատասխաններ չստացան:

ՏԻԳՐԱՆ ԱՍՍՏՐՅԱՆ

Հումորի զգացումը Լեւոն Տեր-Պետրոսյանին չի դավաճանում

Դժվար է ասել, Լեւոն Տեր-Պետրոսյանի ասուլիսը հնգամյա պարբերականությամբ հերթական ասուլիսն էր, թե՞ առաջինը գալիք «ասուլիսային» հնգամյակում: Համենայնդեպս հայ մամուլի եւ ընդհանրապես լրատվական միջոցների նկատմամբ նախագահի ընդգծված անտարբերությունից հետո (եթե չասենք ավելին) նրա մամուլի ֆարսուղարին հաճելի էր տեսնել նախագահի «գործն ու խոսքը» հանրությանը ներկայացնելու դժվարին պարտականությունից ազատ: Այս անգամ նախագահն անձամբ «դիմագրավեց» լրագրողների «չափավորից թույլ» (նկատենք, սպասվածից շատ ավելի թույլ) ճնշմանը, եւ քանի որ Տեր-Պետրոսյանի յուրաքանչյուր հրապարակային ելույթ ուղեկցվում է մամուլի շարունակական թեր ու դեմ մեկնաբանություններով, հիրավի «պատմական» այս ասուլիսն էլ, անշուշտ, երկար կհոլովվի ոչ միայն մամուլում, այլեւ ժողովրդական «բանահյուսության» մեջ: Լրագրողների հարցերը, սակայն, զարմանալիորեն շրջանցեցին ՀՅԴ կասեցմանը, «Դրո» եւ «Վահան Հովհաննիսյան+30» դատավարությունների վերաբերյալ ընդդիմադիր մամուլում նույն լրագրողների կողմից «բարձր տոնայնությամբ» արծարծվող հարցադրումները եւ մեկ տարի շարունակ «լայնքով ու երկայնքով հերկվող» կեղծ ընտրությունների վարկածի, նախագահի լեգիտիմության պնդումների, ավելի ճիշտ «թերլեգիտիմության» խնդիրը (չհաշված Տիգրան Նաղդալյանի «կոկիկ» հարցադրումը, որը, սակայն խուսանավելու հնարավորություն տվեց նախագահին. նա հիշեցրեց բռնությունը մերժելու, դատարտելու մամուլի կոչումը «մոռանալով» իշխանությունների եւ առաջին հերթին հանրապետության նախագահի վճռորոշ դերը «բռնածին իրավիճակի» կանխարգելման գործում):

Ակնհայտ է, որ նախագահն արդեն իսկ կարեւորում է հայ մամուլը որպես հասարակական կարծիքի ձեւավորման գործոն (նույնիսկ առկա խղճուկ տրաֆանակների պայմաններում), սակայն նրա որոշ պատասխաններ ձեւով եւ բովանդակությամբ, ավանդաբար «անբարյացակամ» էին: Խոսքը մասնավորապես «Այժմ»-ի թղթակցի՝ հանրությանը բավականաչափ հուզող եւ մեր իրականության մեջ, ցավոք, անփոփոխ կերպով արդիական խնդրի մասին է: Օգտագործելով հարցի «նախաբանի» մոտավորությունը («Դուք խորհուրդ եք տվել բնակչությանը, թե ինչպես հայթայթել գոյության միջոցներ...»), Լեւոն Տեր-Պետրոսյանն անտեսեց հարցադրումն ըստ էության. «Ի՞նչ խորհուրդ կտայիք այն քաղաքացիներին, որ 3 կամ 5 հազար դրամ աշխատավարձ են ստանում»: Որքան էլ ծեծված, այդ հարցն այժմ ամեն օր այս կամ այն կերպ ստիպված է լուծել գրեթե յուրաքանչյուր հայ ընտանիք: Եվ եթե նախագահի պատասխանը Դավիթ Վարդանյանի հարցադրմանն ի պատասխան «Այժմ»-ի թղթակցի կողմից ընկալվել է որպես խորհուրդ, ուրեմն ենթատեքստը հենց այդպիսին էլ եղել է: Թեեւ, պետք է ասել, թղթակցի ակնկալած «խորհուրդն», այնուամենայնիվ, հնչեց Սերգեյ Երիցյանի հարցին ի պատասխան եւ կոմտորեն կարող է ձեւակերպվել մոտավորապես այսպես. «Հրաժարվեք ղարաբաղյան պահանջատիրությունից, եւ սոցիալական խնդիրները կլուծվեն»: Վտանգավոր մտայնություն, որն այդպես էլ չի արմատավորվում մեր ժողովրդի «ազգային» մտածելակերպում: Ղարաբաղում պատերազմ չկա ավելի քան 3 տարի, իսկ շրջափակումը, բարեբախտաբար, մասնակի նշանակության երեւույթ է, քան իրականություն, թեեւ անվիճելի է, որ տարածաշրջանում ռազմական գործոն լինելու հրամայականն, անշուշտ, որոշակի զոհաբերություններ պահանջում է սոցիալ-տնտեսական ոլորտում (այդ զոհաբերությունները, չգիտես ինչու, չեն խանգարում «ընտրյալների» նորահայս խավի տգրուկաբարո բարգավաճմանը): Այնպես որ բոլոր, այդ թվում կառավարման եւ տնտեսավարման, ապաշնորհ սոցիալական քաղաքականության թերությունները պատերազմով եւ շրջափակումով արդարացնելն առնվազն ժամանակավրեպ է:

Հետաքրքիր էր Լեւոն Տեր-Պետրոսյանի պատասխանը «Նոր հազարամյակ» հանդեսի՝ ավելի քան 6-ամյա կառավարման ընթացքում գործած ամենալուրջ սխալի մասին հարցին: Նախագահը մի կողմից, թվում է, անկեղծորեն խոստովանեց, որ գործել է տասնյակ սխալներ, մյուս կողմից, չառանձնացնելով դրանցից «ամենաճակատագրականը», անուղղակիորեն ժխտեց մեծ հաշվով սխալված լինելու վարկածը:

Մի նկատառում եւս: 2001 թվականի ընտրություններում թեկնածություն առաջադրելու վերաբերյալ «ՀԱՅ FM» ռադիոկայանի թղթակցի հարցին ի պատասխան Լեւոն Տեր-Պետրոսյանն ասաց. «Եթե ամբողջ ազգով շատ խնդրեք, միայն այդ ժամանակ կառաջադրվեմ»: Եթե պարոն նախագահը շարունակում է նախընտրել խոստումներ չտալու, ասել է թե՝ պարտավորություններով իրեն չծանրաբեռնվելու գործելակերպը եւ սոցիալական իրավիճակի որեւէ բարելավում չի կանխատեսում առնվազն առաջիկա չորս տարում, պետք է ենթադրել, որ ասածն ավելի շուտ կատակ է եւ չի նշանակում, թե նախագահը որպես ժողովրդի ձայն կփորձի ընկալել ՀՀՇ-ի կամ X թվով հասարակական կազմակերպությունների եւ կառավարամետ-կառավարամերձ խմբավորումների կամ կուսակցությունների բլոկի խնդրանքը, որ կստեղծվի ի հակակշիռ ընդդիմադիր մի նոր դաշինքի: Ինչ-ինչ, բայց հումորի զգացումն, ըստ ամենայնի, նախագահին չի դավաճանում...

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱԶԳ

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՑՔ ՆԵՐՍԻՑ

Գարնանային ջրեր

Կուսակցական ավանդույթները խժռեցին Դաշինքը

Սեպտեմբեր ամսին նորից որոշ մարդկանց մեջ սկսել էր արթնանալ այն հույսը, թե Հայաստանի քաղաքական կյանքում կարելի է մի նոր ալիք բարձրացնել: Բայց մեր հասարակության մեջ դեռ մնացե՞լ է նոր լարվածություններ կրելու ներուժ, դրան պատրա՞ստ են հիմնական քաղաքական ուժերը:

Դատելով ՀՀՇ վերջին համագումարի ընթացքից, նրա շուրջ առաջացած աղմուկ-աղաղակից, Լ. Տեր-Պետրոսյանի ելույթից, այդ կուսակցության ղեկավարության հետհամագումարյան գործունեությունից եւ անձամբ Վ. Սիրադեղյանի հայտարարություններից, կարելի է ասել, որ իշխանությունները հերթական անգամ վերադասավորում են իրենց ուժերը՝ նախապատրաստվելով առաջիկա ընտրություններին: Իսկ ինչպես երեւում է գործող անձանց ցանկից եւ գործելակերպից, նոր ընտրություններն այնքան էլ շատ չեն տարբերվելու նախորդ երկուսից:

Միեւնույն ժամանակ, ընդդիմության ճամբարում երկարատեւ լռություն էր տիրում: Լավագույն դեպքում, դեպքից դեպք ընդդիմության առաջնորդներից որեւէ մեկը հանդես էր գալիս այս կամ այն երեւույթի գնահատականով:

Թվում է, ընդդիմությունն այս անգամ էլ կարող է ուշանալ: Իսկ անխուսափելի գործընթացներին, այն է՝ խորհրդարանական ընտրություններին քաղաքական մասնակցությամբ այնքան էլ երկար ժամանակ չի մնացել: Մինչդեռ, ըստ դրանց նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի, ընդդիմության շարքերում ուժասպառության նշույլներ են նկատվում: Գուցե պատճառն այն է, որ քաղաքական տարին չափազանց լարված ու հոգնեցուցիչ էր, հարուստ դրամատիկ անցուդարձերով: Այս ընթացքում ավելի ու ավելի պարզ դարձավ միացյալ ընդդիմության ամբողջական պատկերը, որն, ինչպես պարզվեց, ցավոք սրտի, այնքան էլ հաջող չէր:

1997 թ. քաղաքական գարունն ու ամառը սկսվեցին եւ անցան հաստատված որոշակի իրողությունների պայմաններում, որոնցից քաղաքական գործիչները խուսափել չէին կարող, ավելին՝ պետք էր դրանց հետ հաշվի նստել, որքան էլ դրանք տհաճ կամ անընդունելի լինեին: Այսպես, հոկտեմբերից սկսած, շուրջ 5 ամիս Հայաստանի քաղաքական կյանքը պարբերաբար շիկանում էր ավանդական ընդդիմության եւ, թող թույլ տրվի ասելու, ավանդական իշխանությունների շփումներից: Այնինչ հասարակության մի մասը որոշակի սպասումներ ուներ, որ քաղաքական ապարեզ կմտնեն նոր, կենսունակ ուժեր: Դրանք չիրականացան: Այդ սպասումները տարածված էին երկու ծայրահեղ տեսակներ ունեցող մարդկանց շրջանում: Առաջին խումբը պնդում էր, թե ընդդիմությունը վճռական չեղավ իր միասնական թեկնածուի սացած ձայները պաշտպանելիս եւ սպասում էր ընդդիմության շարքերում ավելի ծայրահեղական ձգտումների գերակայությանը կամ էլ ավանդական ընդդիմությունից դուրս այդպիսի նոր քաղաքական ուժերի հայտնվելուն: Այս ոչ սակավաթիվ խումբը հստակ եւ կտրուկ գործողությունների էր սպասում եւ վերջիններիս չլինելու դեպքում պարզապես կհեռանար քաղաքական ակտիվ կյանքից, թուլացնելով ընդդիմության հիմքերը:

Այս խումբը, որ մտահոգված էր հասարակության քաղաքական ծայրահեղ բեւեռացմամբ եւ ձգտում էր թուլացնել այն, սպասում էր, որ երեւան կգան այնպիսի ուժեր եւ գործիչներ, որոնք կկարողանան երկխոսության բերել հակառակորդ կողմերին: Այս տեսակետի կողմնակիցների հույսերն իրականանալի թվացին հաստատես Արմեն Սարգսյանի նկատմամբ: Չնայած նա կառավարությունում ստեղծեց մտավոր, կարող մի խումբ, վերջինիս օրինակը ցույց տվեց, որ առանց հասարակական հենարանի, ներքաղաքական փորձառության ցանկացած, թեկուզեւ ամենաբարի ձգտում դատապարտված է: Հետագայում այս խումբը եւս սկսեց սուզվել քաղաքական անտարբերության մեջ:

Նոր ուժերի առաջացման տեսակետից որոշակի երեւույթներ տեղի ունեցան իշխանության թեւում, եւ գարնանն առաջացած կիսաֆաբրիկատն իր ուրույն՝ ձեւը ստացավ ՀՀՇ համագումարում եւ դրանից հետո: Պետք է ասել, որ այս ուժը երկար ժամանակ շիկացած էր պահում քաղաքական մթնոլորտը: Շատ դեպքերում այդ նոր թեւի ներկայացուցչի մեկ ելույթը կարող էր հասարակության մեջ մոռացության տալ ամբողջ ընդդիմությունը: Այդ խմբի հետ ընդդիմության հարաբերությունները պետք էր կառուցել նուրբ հաշվարկների վրա:

Հաջորդ հաստատված իրողությունն այն էր, որ ընտրությունների ընթացքում եւ ներքաղաքական շրջանում հստակ առանձնացավ ընդդիմության առաջնորդն ի դեմս Վազգեն Մանուկյանի: Իսկ ժողովրդի աջակցությունը նրան խիստ պարտավորեցնող էր:

Հաստատվել էր նաեւ ոչ քաղաքական, բայց քաղաքական գործընթացների վրա ազդեցություն ունենալու մեծ ներուժ պարունակող մի իրողություն եւս: Դա ազատ, ոչ պատշաճական մամուլն ու լրատվության միջոցներն էին, որ կայացել ու ոտքերի վրա կանգնած էին սեպտեմբերյան դեպքերի ժամանակ: Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ դա նախորդ ժամանակահատվածի մեր հասարակության նվաճումն էր, որի դեմ, նույնիսկ սեպտեմբերին, պայքարի գործունքներ չգտնվեցին: Կարելի է ասել, որ ազատ մամուլի ու տեղեկատվության փոքրիկ կղզին մեր իրականության շատ թե քիչ կայացած ժողովրդավարական ինստիտուտ է: Եվ եթե ընդդիմադիր ուժերը նրա հետ ճիշտ հարաբերություններ հաստատեին, կհայտնվեին շահեկան վիճակում:

Ներքին իրավիճակն, ինչ խոսք, ազդել էր նաեւ արտաքին հարաբերությունների վրա: Միջազգային հանրությունն այն կարծիքին էր, որ սեպտեմբերյան դեպքերը հակամարտությունը չեն հանգուցալուծել եւ, հետեւաբար, Հայաստանի հանդեպ իր գործունեությունը կազմակերպում էր սպասողի դիրքից:

Ահա այս պայմաններում միացյալ ընդդիմությունը ոտք դրեց նոր տարի: Անշուշտ, Ազգային համաձայնության դաշինքի պահպանումը նոր երեւույթ էր հայ քաղաքական իրականության մեջ: Կազմակերպվելով որպես զուտ նախընտրական միավորում, սեպտեմբերյան դեպքերից հետո բնականաբար նա պետք է վերանայեր իր ծրագրերն ու խնդիրները, համապատասխան նոր իրավիճակի: Փաստորեն, ուշ աշնան եւ ձմեռվա պատրաստությունից հետո դաշինքը գարուն մտավ առաջին հայացքից բավարար կայունությամբ եւ լուրջ մտադրություններով: Դա էլ հիմք էր տալիս ենթադրելու, որ 97-ի քաղաքական գարունը թեժ է լինելու: Դաշինքի գոյատեւումը, իրարից այդքան տարբեր քաղաքական ուժերի միասնությունը ընկալվում էր որպես միասնականության խորհրդանիշ, ինչը եւ խթանում էր լավատեսական ձգտումները:

Բայց արդեն դաշինքի ձմեռային նախապատրաստական փուլում ի հայտ էին գալիս ներքին խոր տարաձայնությունների նշաններ: Չմեռային փուլը, որն, ըստ գործունեության տրամաբանության, պետք է դառնար աշնան դեպքերի գնահատման, սեփական գործունեության թերի կողմերի վեր հանման ու շտկման ժամանակահատված, ըստ էության, չկայացավ:

Սեպտեմբերյան վերելքի բռնի ճնշումից հետո Հայաստանում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի աղականությունն ընդունեց անկարագրելի բնույթ: Այն մտավ նաեւ դաշինքի ներքին կյանք, ինչն ըստ երեւույթին այնքան էլ դժվար չէր, քանի որ ընտրությունների նախաշեմին կազմակերպված դաշինքը մի կառույց էր, որ պետք է աջակցեր ընդդիմության հաղթանակ տանելու ամենահավանական թեկնածուին: Սեպտեմբերից հետո, փաստորեն, ընդդիմության միասնության միակ հենքը «ընդհանուր թշնամու» դեմ պայքարն էր: Եվ չնայած գարնանը դաշինքը ձգտեց իր գործունեությանն ավելի քաղաքական տեսք տալ, զուտ աշխատելով համաժողով, այդպես էլ մնաց հին տեսքով: Այսպիսով, ընդառաջ չգնալով բազմաթիվ կոչերի, առանց հրապարակավ կամ գոնե դաշինքը կազմող կուսակցությունների շարքերում լուրջ գնահատականներ տալու սեպտեմբերյան դեպքերում դաշինքի պահվածքին, ընդդիմությունը շարունակեց գործել շատերին անհասկանալի ձեւով: Այդպես էլ ոչ ոք չստացավ այն հարցի պատասխանը, թե ինչպես եղավ, որ արդեն, սեպտեմբերի 25-ին ժողովրդի բացարձակ մեծամասնության անվերապահ աջակցությունն ունեցող քաղաքական միավորումը մեկ գիշերվա ընթացքում ջախջախվեց ընդամենը մեկ-երկու հարյուր աջակից ունեցող իշխանությունների կողմից: Առջեւը տեսնելու համար պետք էր հետ նայել: Մինչդեռ ընդդիմությունը երկյուղում էր այդ անել:

Այսպիսի իրավիճակում էլ ընդդիմությունը սկսեց իր գարնանային կամպանիան, որի թե քաղաքական, թե կազմակերպչական հիմքերը խարխուլ էին: Այդ ընթացքում ընդդիմությունն ընդառաջ գնալով հասարակության մեջ տիրող տրամադրություններին, փորձեց կազմակերպչական նորամուծություն կատարել: Դաշինքի կազմն ընդլայնվեց, նա ներառեց նաեւ բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, որոնց տեղն ու դիրքն այդպես էլ պարզ չդարձավ: Միեւնույն ժամանակ, այդ ազատ կազմակերպչական կառույցը ղեկավարվում էր կարծր ձեւով: Ամենայն հավանականությամբ, մեր իրականության համար ավելի արդյունավետ կլիներ կազմակերպման եւ ղեկավարման համապատասխան, ազատ ձեւը:

Այն ընթացքում, երբ դաշինքի կուսակցությունների առաջնորդներն ինքնամոռաց նվիրվել էին, ըստ իրենց, ամենակարեւոր գործին՝ հյուծիչ, երկարատեւ քննարկումներին, աճում էր ընդդիմադիր կուսակցությունների շարքերը համալրել ցանկացողների քանակը, որոնք ավելի մարտական էին տրամադրված: Եվ այդ ուժը կազմակերպելու գործը երկրորդ պլան մղվեց, ավելացնելով ընդդիմությունից դժգոհողների շարքերը: Դա հետադարձ կապով սկսեց ազդել հասարակության տրամադրությունների վրա: Իսկ դաշինքը սկսեց սովորական դարձած հնաոճ հանրահավաքների շարքը, հույս ունենալով, որ ընթացքում կարող են շտկել տարաձայնությունները, ավելի կազմակերպված բնույթ տալ նոր կամպանիային: Կարելի է պնդել, որ առաջին հանրահավաքը հաջողվեց: Քաղաքականապես ակտիվ մարդիկ ուզում էին տնտղել դաշինքի պատրաստակամությունն ու ծրագրերը՝ շարունակելու խոստացած պայքարը: Դա ցույց տվեց, որ հասարակությունը դաշինքից սպասելիքներ ունի: Սակայն հետագա հոգեմաշ ու ծանձրալի հանրահավաքները հետզհետե հասարակության մեջ ուժեղացրին անտարբերության դրսեւորումները, հաստատելով մերժողական տրամադրությունների:

Գարնանային կամպանիայի քարոյահոգեբանական հիմքն ավելի շուտ սոցիալ-տնտեսական թեքում ուներ: Դաշինքի առաջնորդների գնահատմամբ մարդիկ պետք է ընդվզեին, ելնելով իրենց սոցիալական ծանր պայմաններից: Դա կարելի է դասել քաղաքական կողմնորոշման սխալների շարքին: Հայ ժողովրդի պատմական փորձի ամենահպանցիկ ուսումնասիրությունն իսկ խոսում է այն մասին, որ մեզ համար զուտ սոցիալական խնդիրները ըմբռնացման հիմք չեն կարող լինել: Պատմությունը ցույց է տալիս, որ հայերի առաջին հերթին արթնանում է մեծամասամբ ազգային խնդիրների շուրջ: Եվ ահա դաշինքի ղեկավարներին չհաջողվեց առաջնորդել այն քարոզչական դաշտը, որով ցույց տվեին մեր ժամանակների խնդիրների ազգային հիմքերը, կարծրացող բարքերի ու երեւույթների վտանգավորության ասիճանը ընդհանուր նպատակների իրականացմանը խոչընդոտելու գործում: Քարոզչական թույլ աշխատանքներում չհաջողվեց ներդաշնակել ազգայինն ու սոցիալականը: Նույնիսկ դաշինքի ավելի ազգային թեքումով կուսակցությունները տվեցին ավելի գայթակղիչ սոցիալական կամ մինչեւ իսկ սոցիալիստական խնդիրների քարոզչությանը: Մինչդեռ այդ ժամանակ ուսումնասիրությունները (որոնց նկատմամբ ընդդիմադիր կուսակցությունների շատ ղեկավարներ համահարանով են մոտենում) ցույց էին տալիս, որ մեր հասարակության մեջ գերակշռող են ազգայնական եւ ազատական ձգտումները: Այդ աններդաշնակությունը խոսում էր այն մասին, որ ժողովրդի հետ կապի բացակայությունը բնորոշ է ոչ միայն իշխանական ճամբարին:

Մինչդեռ ընդդիմության շատ առաջնորդներ ավելի ու ավելի էին ընդունում անսխալական կեցվածք, մտնում մեծ մտածողի դերի մեջ, չնկատելով, թե ինչպես են իրենց հնացած հնարքներով ու գաղափարներով ծանձրացնում մարդկանց: Ամռան սկզբին, բովանդակության տեսակետից, գործունեության հանրահավաքային ձեւը վերջնականապես հակոտնյա դարձավ հասարակության տրամադրություններին: Դրանք դարձան ճարտասանության տեղ, բոլորին հայտնի, վաղուց գնահատական տացած իրողությունների ներկայացման ու աննպատակ բողոքների արտահայտման տեղ:

Հանրահավաքներում նոր մարդ չերեւաց, ուստիեւ կարելի է ասել նոր խոսք չինչեց: Դա խոսում էր առաջին հերթին դաշինքի կուսակցությունների ներկազմակերպական դեմոկրատական ինստիտուտների թերարժեք կայացման մասին, որոնք դեպքերում նաեւ կուսակցությունների, հետեւաբար նաեւ հայ քաղաքական կյանքի ճահճացման մասին: Կուսակցություններում պատշաճ հիմքերի վրա չի դրված շարքերից եկող տեսակետների մշակման մեխանիզմը, որով պետք է ապահովվի ժողովրդի հետ կապի առաջին շրջանը: Կուսակցությունների ղեկավարությունների կարծրացած տրամադրությունները, ներկուսակցական ավանդույթները սկսեցին դանդաղ, բայց հիմնավորապես քայքայել միասնական ընդդիմության հիմքերը: Կուսակցական ավանդույթները խժռեցին դաշինքը:

Գարնանային կամպանիայի քարոզչական աշխատանքների՝ ասպարեզն ընդդիմության համար խիստ նեղ էր: Ակնհայտ էր, որ իշխանությունները ընդդիմադիր որեւէ գործչի թույլ չեն տա խոսք ասել քարոզչական հիմնական միջոցներով հեռուստատեսությամբ եւ ռադիոյով: Ուստի պետք էր այդ բացը, լրացնել այլ միջոցներով: Կուսակցական կառույցների կարողությունները անհրաժեշտ էին, բայց բավարար չէին կարող լինել: Մնում էր մեկ հիմնական միջոց՝ մեկ ընդհանրական մամուլի միջոց, կամ ուժեղացնել եղած թերթերը, ավելացնելով եւ դրանց տպաքանակը, եւ պարբերությունը: Դաշինքն ընդունակ չեղավ այդ անելու: Նա չկարողացավ ստեղծել ընդհանուր քարոզչական մեխանիզմներ: Այսքանը միայն բավարար էր, որ դաշինքի գործունեությունը դատապարտված լիներ:

Բացի այդ, ընդդիմությունը չկարողացավ իր հարաբերությունները պատշաճ մակարդակի վրա պահել ազատ լրատվական միջոցների եւ մամուլի հետ, չնայած վերջիններիս կոչումն ու ձգտումները համընթաց էին ընդդիմության գործունեության ուղղությանը:

Կամաց-կամաց երեւան եկան նաեւ միջկուսակցական հարաբերությունների ավանդական բացասական կողմերը՝ դաշինքը դարձավ հակասությունների հանրագիտարան: Հանրահավաքներն ասիճանաբար վերածվեցին հավակնությունների ցուցահանդեսի, ինչը հակացուցված է հասարակության հետ վստահելի կապեր, երկխոսություն հաստատելու գործում: Մարդկանց աչքում դաշինքն սկսեց երեւալ որպես անհայտ զբաղմունքի եւ ձգտումների տեր կուսակցությունների մեխանիկական հավաք, դրանով բաց թողնելով իրենց շուրջը հավաքված հասարակական կազմակերպություններին ու հանրահայտ մարդկանց:

Զուգահեռաբար այդ ճեղքերից սկսեցին օգտվել իշխանությունները: Սկսվեց պատմությունից հազար անգամ հայտնի սցենարը՝ առանձին բանակցություններն իշխանությունների հետ, որին հետեւեց այդ կուսակցությունների կողմից պայքարի իմիտացիան: Դա, օրինակ, եղավ հունիսի 13-ի համընդհանուր բողոքի օրը: Այդ օրը մարդիկ նորից ուզեցին դաշինքի մեջ տեսնել ձգտում, պայքար, բայց արդեն ուշ էր: Դաշինքն այդ կազմով, տեսքով կենդանության նշույլներ ցույց չէր տալիս: Միայն թե այդ մասին խոսելուց երկյուղում էին:

Այս ամենը ընդդիմությանը կանգնեցրեց որոշ իրողությունների առջեւ, որոնցից, ընդհանրացնելիս, կարելի է ընդգծել հետեւյալը

- Դաշինքը անկենդան է,
- Ընդդիմությունը չի տիրապետում նոր գաղափարների, նոր քարոզչական մեթոդների, գոյություն չունի քարոզչական համակարգ,
- Ընդդիմության գործելակերպը թույլ չտվեց նոր քաղաքական ուժերի եւ դեմքերի աճ իր շարքերում,
- Ընդդիմությանը սպառնում է քաղաքական կրճի նվազելու վտանգը, իսկ նրա որոշ առաջատար գործիչների՝ քաղաքական դաշտից դուրս մնալու վտանգը,
- Ընդդիմության գործունեության անհետեւողական, լրջությունից հեռու ձեւը հասարակությանը մեծ քարոյահոգեբանական կորուստ հասցրեց,
- Հասարակությունը քաղաքական լուրջ պայքարի համար ուժասպառ է, թե՛ իր իրավունքների թե՛ արտաքին վտանգի դեմ:

Եվ եթե Հայաստանի քաղաքական (եւ ոչ միայն) կյանքի առաջընթացի համար մեղավորներ ու պատասխանատուներ փնտրելու լինենք, մեղավորների՝ այսօրվա իշխանությունների անվան կողքին միշտ հնչելու է մի հարց, իսկ ո՞ւր էին մյուսները: Եվ պատասխանատվությունը բաժանելու ենք մենք, մյուսներս, ընդդիմությունը: Իսկ գնահատականը տվելու է ամբողջ հայ ժողովրդի համար: Արձանագրվելու է, որ 1997 թ. եւս հայ ժողովուրդը չկարողացավ օգտագործել իրեն ընձեռած հնարավորությունը ստեղծելու հզոր, առողջ, եռանդուն պետություն: Պատմական պատասխանատվությունը բոլորինս է ներկա սերնդինը:

ԱՐԱՄ ՄԱՏԻՏՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Օլբրայթ-Պրիմակով ուրախ զուգերգը

Օրերս Նյու Յորքում Միացյալ Նահանգների եւ Ռուսաստանի արգործնախարարներ Օլբրայթն ու Պրիմակովը ստորագրել են համաձայնագիր, որով 4 տարով հեռաձգվում է հեռահարության մեծ շառավիղ ունեցող հրթիռների ոչնչացման ժամկետը: Ըստ ավելի վաղ ստորագրված եւ մինչեւ այսօր էլ Ռուսաստանի Պետական դումայի չվավերացրած «ՍՍՍ-2» կոչվող պայմանագրի, որ հայերեն թարգմանվում է իբրեւ «Հարձակողական (կամ՝ ստրատեգիական) սպառազինությունների սահմանափակման 2-րդ պայմանագիր (որը ամերիկյան Սենատն, ի դեպ, արդեն վավերացրել է), երկու կողմերը պարտավորվել էին մինչեւ 2003 թվականի հունվարի 1-ը ոչնչացնել իրենց այդ կարգի հրթիռների երկու-երրորդը: Սակայն այդ ժամկետը երկարաձգվել է մինչեւ 2007 թվականի հունվարի 1-ը: Տիկին Օլբրայթը գոհունակություն է արտահայտել ձեռք բերված պայմանավորվածությունից: Ինչո՞ւ է այսման ուրախ ԱՄՆ-ի պետքարտուղարը, եթե հավելյալ չորս տարի ռուսական միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների մի հսկա խանգարություն դեռեւս սպառնալու է իրենց անվտանգությանը: Որովհետեւ դրանց ոչնչացման ժամկետը երկարաձգելու փոխարեն ռուսական կողմը համաձայնել է, որ Նահանգները շարունակի տակտիկական հակահրթիռային զենքի իրենց բոլոր 5 նախագծերի վրա տարվող աշխատանքները: Խոսքը ՕՆՏի պատերազմում փորձարկված եւ իրենց չարդարացրած ամերիկյան «Փեթրիոթ» տիպի հրթիռների փոխարեն նորն ստեղծելու աշխատանքի մասին է, հրթիռի, որը Մոսկվան արդեն ունի՝ ի դեմս «Ս-300» անվանումը կրող եւ «Փեթրիոթներին» տեխնիկա-տակտիկական բոլոր բնութագրերով գերազանցող գերժամանակակից զենքի:

Համաձայնելով ամերիկյան կողմի այդ կարգի աշխատանքների շարունակմանը, ռուսները թափանցիկ կերպով հասկացրել են երկու բան՝ նախ, որ այնքան էլ չեն վախենում, եթե այդ զենքից ամերիկացիներն էլ ունենան, եւ երկրորդ՝ ընդգծել են, թե համոզված են, որ ամերիկացիների համանման հրթիռները երբեք այլեւս իրենց դեմ չեն օգտագործվի:

Իսկ ի՞նչ է շահում Մոսկվան չորս տարյա երկարաձգումից: Փորձագետներն այս առթիվ նշում են երկու հանգամանք. նախ, մարտագլխիկների ոչնչացումը բավական ժամանակ եւ լրացուցիչ ծախս պահանջող գործողություն է: Դումայով այս պայմանագիրն «անցկացնելու» դժվարություններից մեկն էլ հենց այդ էր, քանի որ ակնհայտ էր, որ ռուսները «չեն տեղավորվում» 1993 թվականին սահմանված ժամկետներում: Բացի այդ, շատ հնարավոր է, որ մինչեւ 2003 թվականը պատրաստ լինի «ՍՍՍ-3» պայմանագիրը, որով արգելք դրվի նաեւ այնպիսի հրթիռների ստեղծման վրա, որոնք թույլատրված են «ՍՍՍ-2» պայմանագրով, եւ այդ դեպքում Մոսկվան այլեւս լրացուցիչ ծախսեր չի անի դրանք կառուցելու համար, որպեսզի հետո, արդեն երրորդ պայմանագրով, կրկին ոչնչացնի:

Օլբրայթ-Պրիմակով բանակցություններին մասնակցել են նաեւ Ղազախստանի, Ուկրաինայի ու Բելառուսի ներկայացուցիչները, եւ այս հնգյակը Նյու Յորքում ստորագրել է եւս մի հարակից փաստաթուղթ, որը սահմանափակում է հակաօդային պաշտպանության համակարգի հրթիռների փորձարկումները: Իմաստն այն է, որ Ղազախստանը, Ուկրաինան ու Բելառուսը այդ նպատակներով չօգտագործեն ԽՍՀՄ փլուզումից հետո իրենց մնացած ռադարները: Իսկ դա նշանակում է, որ վերանում է հարավից եվրոպական նպատակակետերին ահաբեկչական առանձին հարվածներ հասցնելու վտանգը, ինչը մինչ այժմ շատ էր մտահոգում Արեւմուտքին: Չէ՞ որ նրանք առայժմ ի վիճակի են ոչնչացնելու ոչ ավելի, քան 20-30 այդպիսի հրթիռ, իսկ ավելի մեծաքանակ արձակումների դեմ անզոր են: Ստորագրված փաստաթղթով ավելանում է համաեվրոպական խաղաղության «ամրության պաշարը», եւ դա է երկու կողմերի գոհունակության հիմքը:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Աստղերը համախմբվեցին իմ շուրջը եւ ես այդ որոշումը կայացրեցի ընդամենը երկու օր առաջ, ասել է պրն Թրրները CNN-ի եթերով անցյալ հինգշաբթի, սեպտեմբերի 18-ին: Մի քանի անգամ տատանվելուց հետո ես վերջնականապես հանգեցի այդ եզրակացությանը»:

Այդ մասին նա սկսել էր մտածել Նյու Յորք թռչող ինքնաթիռի մեջ, որտեղ թերթերն աչքի անցկացնելով նկատել էր, որ վերջին 9 ամիսների ընթացքում իր 2.2 մլրդ դոլար կազմող հարստությունը դարձել էր (օգոստոսի 31-ի դրությամբ) 3.2 միլիարդ դոլար:

Նյու Յորքի հյուրանոցներից մեկում, որտեղ ի պատիվ իրեն ճաշկերույթ էր կազմակերպված լրատվության ասպարեզում CNN-ի ներդրումների համար, Թրրները կնոջը՝ հանրահայտ դերասանուհի Ջեյն Ֆոնդային հայտնում է իր մտահոգման մասին եւ վերհիշում, թե ինչպես էր վերջինս ուրախությունից «լաց լինում»: Սեպտեմբերի 17-ին Թրրներն իր երկարամյա ընկերոջը եւ ֆինանսական խորհրդատուին՝ Գլովերին է զանգահարում, որն անմիջապես կապվում է նվիրատվությունների գծով մասնագետ-իրավաբանի հետ: Վերջինս բացատրում է, որ առանց խոշոր գումար հարկ վճարելու՝ նա չէր կարող նման փոխանցում կատարել ՄԱԿ-ին, քանի որ ՄԱԿ-ը բարեգործական կազմակերպություն չէր:

Մեկ միլիարդ նվիրաբերելու դեպքում նա ստիպված կլիներ մոտ 550 միլիոն դոլարի հարկ վճարել, որն անհիմաստ էր: Սինչդեռ հիմնադրամ կամ նման բարեգործական ընկերություն ստեղծելու դեպքում հարկերն անհամեմատ կնվազեին: Ֆինանսական խորհրդատուները փորձել են համոզել, որ նա հետաձգի իր որոշման հրապարակումը, մինչեւ մարտասները ուսումնասիրվեն եւ համապատասխան եզրակացություններ արվեն, բայց Թրրները նշել է, որ «չի կարող սպասել»:

Սանհեթանի Մարիոթ Մարքիզ հյուրանոցում կոկտեյլի հյուրասիրման ժամանակ նա այդ հարցը քննարկել է Կարնեգի կորպորացիայի տնօրեն Վարդան Գրիգորյանի հետ: Այդտեղ է, որ միտք է ծագել գումարը 10 տարվա ընթացքում տրամադրելու մասին: Եթե բաժնետոմսերի արժեքը նվազի այդ տարիների ընթացքում, գումարը նույն համեմատությամբ նվազելու է, եթե ոչ՝ ապա տարեկան 100 միլիոն է տրամադրվելու հիմնականում առողջապահությանը, մթնոլորտի մաքրության եւ բնակչության սոցիալական հոգսերը թեթեւացնելու նպատակներին: Չնայած դեռ որոշակի չեն նշված անունները, ենթադրվում է, որ ընդհանուր նվիրատվությունից կօգտվեն ՅՈՒՆԻՍԵՖ-ը, առողջապահության միջազգային կազմակերպությունը, ՄԱԿ-ի զարգացման, մթնոլորտի մաքրության, Համաշխարհային պարենի ծրագրերը, ազգաբնակչության աճի եւ ընտանիքի կազմի հիմնադրամը եւ գաղթականների հարցերով զբաղվող կոմիտեն:



Մեկ միլիարդ դոլարից հրաժարվելու նման քայլին Թրրները դիմել է ներշնչվելով մայր Թերեզայի, Ժակ Իվ Կուստոյի, իշխանուհի Դիանայի, Ջորջ Սորոսի եւ հատկապես անցյալ տարի իր 150 հազար դոլարի ամբողջ խնայողությունը ուսանողների թոշակավորմանը տրամադրած սեւամորթ լվացարարուհի Օսեոլա Մկֆարթիի օրինակներից: Միջազգային կազմակերպությանը նշանակալի նվիրատվությամբ օժանդակելու գաղափարը արդեն մեկ տարի է, ինչ զբաղեցրել է Թեդին: ՄԱԿ-ի վարչական տնօրինությունը, որին հաճախ քննադատել են անարդյունավետության համար, սնանկացման եզրին է հիմնականում արտասահմանյան պարտքերի հետեւանքով: Ամերիկան, նրա ամենախոշոր մասնակիցը, մեկ միլիարդ դոլար է պարտք:

Այդ, ինչպես նաեւ Ամերիկայի առաջարկած ՄԱԿ-ի վերակառուցման՝ հարցերը բուռն քննարկման առարկա են ՄԱԿ-ի օրերս ընթացող տարեկան ընդհանուր ժողովի ընթացքում:

Բայց Թրրների նվիրատվությունը չի հատկացվի վարչական տնօրինությանը կամ՝ խաղաղասիրական նպատակներին, այլ հիմնականում մարդասիրական ծրագրեր ֆինանսավորելուն, հիվանդությունների դեմ պայքարելուն կամ երեխաների ու փախստականների կարիքները հոգալուն:

«Մարդիկ սիրում են փողը, խոստովանում է Թրրները, ընդունելով, որ փողից հրաժարվելը բնածին երեւույթ չէ, բայց մի քանի անգամ կիրառվելուց հետո, հետեւանում է: Ես փորձում եմ կենցաղավարության եւ բարեկրթության օրինակ ծառայել:

ԱՆՆԱԽԱԴԵՊ

Ինչպե՞ս հրաժարվել մեկ միլիարդից

Իր հարստության մեկ երրորդից հրաժարվելու Թեդ Թրրների զգայացունց հայտարարությունը, որի մասին «Լիբերասիոնի» լրատվությունը զեկուցել էինք մեր սեպտեմբերի 25-ի համարում, գրավել է ամբողջ միջազգային մամուլի ուշադրությունը, որի առաջավոր ներկայացուցիչներից Wall Street Journal-ից թարգմանաբար քաղում ենք հետեւյալ տեղեկությունները:

10 տարվա ընթացքում տրամադրելու մասին: Եթե բաժնետոմսերի արժեքը նվազի այդ տարիների ընթացքում, գումարը նույն համեմատությամբ նվազելու է, եթե ոչ՝ ապա տարեկան

Բայց Թրրների նվիրատվությունը չի հատկացվի վարչական տնօրինությանը կամ՝ խաղաղասիրական նպատակներին, այլ հիմնականում մարդասիրական ծրագրեր ֆինանսավորելուն, հիվանդությունների դեմ պայքարելուն կամ երեխաների ու փախստականների կարիքները հոգալուն:

«Մարդիկ սիրում են փողը, խոստովանում է Թրրները, ընդունելով, որ փողից հրաժարվելը բնածին երեւույթ չէ, բայց մի քանի անգամ կիրառվելուց հետո, հետեւանում է: Ես փորձում եմ կենցաղավարության եւ բարեկրթության օրինակ ծառայել:

Ամերիկյան ընկերություններն ընդդեմ առեւտրական պատժամիջոցների

600-ից ավելի ամերիկյան ընկերություններ հիմնել են «Յու էս էյ ինգեյջ» միությունը, որպեսզի հակահարձակում սկսեն ԱՄՆ դաշնային մարմինների, նահանգների ու մունիցիպալիտետների իշխանությունների ձեռնարկած առեւտրական պատժամիջոցների դեմ: «Յու էս էյ ինգեյջի» տվյալներով, վերջին չորս տարում ԱՄՆ-ը 35 երկրների դեմ միակողմանիորեն 61 պատժամիջոց է կիրառել զենքի ու թմրադեղերի առեւտրի եւ մարդու իրավունքների խախտման պատճառաբանությամբ, որի հետեւանքով ամերիկյան ընկերությունները զրկվել են բազմաթիվ շուկաներից:

Սենատոր Ռիչարդ Լուգարի եւ կոնգրեսական Լի Համիլթոնի աջակցությամբ պատրաստված համապատասխան օրինագիծը մոտ օրերս կներկայացվի Կոնգրեսի զույգ պալատներին: Օրինագծով նախատեսվում է անցկացնել պատժամիջոցների տնտեսական հետեւանքների եւ դրանց ներգործության արդյունավետության գնահատում: Նախագահը կկարողանա չեղյալ հայտարարել պատժամիջոցները, եթե դրանք համարի ԱՄՆ-ի շահերին ներհակ: Ամեն տարի պատժամիջոցները կվերանայվեն, իսկ դրանց գործողության ժամկետը կսահմանափակվի երկու տարով, եթե չկա Կոնգրեսի որոշում դրա երկարաձգման մասին:

Նոր օրինագիծը չի վերաբերում Հելմս-Բարթոնի օրենքի համաձայն ձեռնարկված պատժամիջոցներին, որոնց նպատակը Կուբայում կատարվող ներդրումների խոչընդոտումն է:

Ինչպես նշում է «Ֆայնենշըլ թայմզ» թերթը, «Յու էս էյ ինգեյջը» մտադիր է վկայակոչել սահմանադրությունը, որպեսզի հասնի նահանգների ու մունիցիպալիտետների մակարդակով ձեռնարկվող պատժամիջոցների վերացման: Միությունը մտադիր է նաեւ ապացուցել, որ այսպես կոչված «ընտրովի գնումների կանոնները», որոնցով պետական մարմիններին արգելվում է ապրանքներ ու ծառայություններ ձեռք բերել պատժամիջոցների ենթակա երկրներում գործող ընկերություններից, թուլացնում են դաշնային կառավարման լիազորությունները արտաքին քաղաքականության ընդլայնման եւ արտաքին առեւտրի կարգավորման բնագավառներում:

Միությունը պահանջում է չեղյալ հայտարարել 189 միակողմանի տնտեսական պատժամիջոցներ, որոնք առաջարկված են կամ 1993 թ.-ից արդեն գործում են 42 երկրների նկատմամբ: Ընկերություններին ամենից շատ մտահոգում է հրեստոնյաներին հալածող երկրների դեմ պատժամիջոցներ ձեռնարկելու առաջարկությունը: Համապատասխան օրենքի ընդունումից հետո պատժամիջոցներ կարող են ձեռնարկվել Սուդանի, հեռագայում նաեւ Չինաստանի, Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի եւ մի շարք այլ երկրների դեմ: Գործարար շրջանակների ղեկավարների կարծիքով, պատժամիջոցների տարածումը վկայում է, որ ԱՄՆ-ը անկարող է «սառը պատերազմի» ավարտից հետո արտաքին քաղաքականության միասնական նպատակ մշակել:

«Յու էս էյ ինգեյջը» գործում է 20 տարբեր խմբերի՝ գիտական կենտրոնների, հակաահաբեկչական կազմակերպությունների, հակաթմրադեղային պայքարի մասնագետների, ինչպես նաեւ եկեղեցու հետ համատեղ, որպեսզի հնարավոր լինի մշակել զանազան տարածաշրջանների հարթման դիվանագիտական ուղիներ:

Պ. Ք.

ՀԱՍԱՐՈՍ

Կիպրոսը հերքում է Անկարայի պնդումները

ՆԻԿՈՍԻԱ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կիպրոսի Հանրապետության կառավարությունը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանին հասցեագրած նամակում հերքել է Անկարայի այն պնդումները, թե Ռուսաստանից գնված զենիթահրթիռային համալիրները կդզում տեղաբաշխելը սպառնալիք են ներկայացնում Թուրքիայի անվտանգության համար: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, փաստաթղթում ասվում է, որ «բռնաբափանցման, նախահարձակ քաղաքականություն վարող Թուրքիան ինքն է իրապես սպառնում Կիպրոսին՝ կիպրաթուրքերին, տարածաշրջանի խաղաղությանն ու անվտանգությանը: Զարմանք է հարուցում այն հանգամանքը, որ 23 տարի շարունակ Կիպրոսի տարածքի 37 տոկոսն օկուպացնող Թուրքիան հանկարծ մտահոգություն է ցուցաբերում տարածաշրջանի անվտանգության եւ կայունության նկատմամբ»: Կիպրոսի Հանրապետության կառավարությունն ընդգծում է կղզին լիովին ապառազմականացնելու նախագահ Գլավկոս Քլերիդեսի առաջարկության կենսագործման կարեւորությունը: «Հրթիռների ծավալման անհրաժեշտությունը կվերանա, եթե էական առաջընթաց ձեռք բերվի Կիպրոսի հիմնախնդրի կարգավորման ասպարեզում», նշվում է ուղերձում:

Բորիս Ելցինը հաստատեց «կրոնական» նոր օրենքը

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինն սեպտեմբերի 26-ին հաստատեց «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը, որը, ըստ նրա ստեղծողների կարծիքի, կոչված է պաշտպանելու ռուսական ուղղափառ եկեղեցին: Օրենքի նախորդ տարբերակի դեմ նախագահ Ելցինը բազմաթիվ անգամ էր դուրս եկել, սակայն, որոշ մեկնաբանների կարծիքով, օրենքի վերջնական տարբերակը շատ քիչ է տարբերվում մերժված տարբերակից եւ փաստորեն նույնն է մնացել: Ռուսաստանի խորհրդարանի վերին պալատը չորեքշաբթի օրը միաձայն հաստատել էր օրենքի այս նախագիծը, իսկ Պետդումայի ձայների ճնշող մեծամասնությամբ հաստատել էր անցած շաբաթ:

«ԱՇԱՏԱՐԱՆՔ», BBC

«Թալիբանի» զինված ջոկատները շրջապատել են Մազարի Շարիֆը

ԱԲՈՒ ԴԱԲԻ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Թալիբան» աֆղանական շարժման ղեկավարությունը հաղորդել է, որ իր զինված ջոկատները բոլոր կողմերից շրջապատել են Մազարի Շարիֆը՝ երկրի հյուսիսի վերջին քաղաքը, որը գտնվում է հակաթալիբյան միության ուժերի վերահսկողության ներքո: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, «Թալիբան» շարժման ղեկավար մոլլա Մոհամադ Օմարը պատշտպանողներին կոչ է արել «զենքը վայր դնել եւ դադարեցնել արյունահեղությունը»: «Եթե մեր հակառակորդները կամովին զենքը վայր դնեն, ապա նրանց կյանքն ու գույքը վտանգից զերծ կլինեն, հայտարարել է նա: Եթե դա չանեն, ապա նրանց ճակատագիրը կորոշի դատարանը»: Քաբուլում թալիբների ներկայացուցիչն Աֆղանստանի հարեւան երկրներին նախազգուշացրել է, որ նրանք իրենց հակառակորդներին աջակցություն չտրամադրեն եւ ոչ էլ թույլ տան անցնել իրենց երկրի տարածքով:

ԱԶԳ

Մշակույթ

Մուսա լեռան հերոսամարտի 82-րդ տարելիցի տոնակատարությանը մասնակցելու համար Երեւան էր ժամանել ավստրիահայ դաշնաբան, կինոռեժիսոր եւ սցենարիստ Արտեմ Օհանջանյանը: Նա հայկական հարցին եւ հայերի ցեղասպանությանը նվիրված մի շարք աշխատությունների հեղինակ է:

Ծնվել է Բաքվում: Մանկությունն ու դպրոցականությունն անց է կացրել Իրանում: Քառասուն տարի, ահա, հաստատված է Ավստրիայում:

Յուրաքանչյուրի պարտականությունն է՝ ապրել եւ գործել հանուն ճշմարտության

Նշանավոր դաշնաբան եւ կինոգործիչ Արտեմ Օհանջանյանը Երեւանում



Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման զարթոնքի դահիճ 1988 թվականին, կազմել է «Հայերի ցեղասպանությունը» փաստաթղթերի երկրորդ հատորը: Մյունխենում լույս ընծայված այդ հատորում առաջին անգամ հրապարակվել են Ավստրիայի արխիվներում դահավոր շատ փաստաթղթեր:

Հաջորդ տարի, 1989 թվականին գրած «Հայասան, թաքուն ցեղասպանություն» ծավալուն աշխատության մեջ, հիմնականում օգտագործելով Ավստրիայի արխիվներում հայտնաբերված վավերական փաստաթղթերը, շարադրել է հայերի զանգվածային ջարդի եւ տեղահանության դաշնությունը, ժամանակի կարեւոր հրապարակագրերի ընդհանուր ֆոնի վրա ցույց տվել այդ կարեւոր հարցի նկատմամբ Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի հասարակական կարծիքը եւ լուսաբանել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան հառաստն օրը» վեպի ստեղծման դաշնությունը:

Արտեմ Օհանջանյանը հեղինակն է նաեւ «Մուսա լեռան հառաստն օրը» գեղարվեստա-վավերագրական ֆիլմի, որը 1995 թվականին ցուցադրվեց Ավստրիայի հեռուստատեսությամբ: Ֆիլմը արքանյակային կարգի միջոցով միեւնույն ժամանակ հեռաստվեց նաեւ եվրոպական մի շարք երկրներում:

Ֆիլմում արծարծվում է նաեւ այն հարցը, թե ինչո՞ւ է Ֆրանց Վերֆելը գրել «Մուսա լեռան հառաստն օրը» վեպը:

Նույն այդ հարցը ուղղեցինք նշանավոր գիտնականին՝ հանդիպման ժամանակ:

«Բացի հայ ժողովրդի նկատմամբ ունեցած մեծ համակրանքը ու նրա հանդեպ գործադրված ոճրի դատապարտումը, ասաց նա, Ֆրանց Վերֆելն այդ դյուցազներգությամբ ուզում էր գերմանական ժողովրդին զգուշացնել նացիոնալ-ֆաշիստական գաղափարախոսության վտանգավորության մասին, որը կարող էր հանգեցնել նույն ոճրագործությանը, ինչպիսին հայերի նկատմամբ գործադրվածն էր: Սակայն, երբ 30-ական թվականների սկզբին գիրքը տպագրվեց, Հիտլերն ու իր համախոհները իշխանության գլուխ էին անցել եւ վեպի տարածումն արգելվեց: Հետագայում, հալածանքների եւ կոտորածների զոհ դարձած հրեաները թաքուն կարդում էին այդ գիրքը եւ հավատում, որ իրենք էլ մուսալեռցիների պես կփրկվեն սպանդից:

– Պարոն Օհանջանյան, իսկ ինչպիսի՞ն է Ֆրանց Վերֆելի եւ մասնավորապես նրա «Մուսա լեռան հառաստն օրը» վեպի նկատմամբ հետաքրքրությունը գրողի հայրենիքում Ավստրիայում:

– Ինչպես բոլոր դասական գրողները Ֆրանց Վերֆելը եւս ապրում եւ հարատեւում է իր ժողովրդի հետ: անկախ ժամանակից: Իսկ «Մուսա լեռան հառաստն օրը» վեպը Ավստրիայում վերջին անգամ վերահրատարակվել է երկու տարի առաջ:

– Երկու խոսքով Ձեր նոր գործունեության մասին:

– Շարունակում եմ այն գործը, որի մասին նշել եք արդեն: Ինձ վրա է դրված Վիեննայում ստեղծված «Ֆրանց Վերֆելի կոմիտե» ավստրիական կազմակերպության փոխնախագահի պարտականությունը: Կոմիտեն գործուղել էր ինձ Մուսա լեռան հերոսամարտի 82-րդ տարելիցի տոնակատարությանը մասնակցելու համար:

Երեւանի պետական համալսարանի գերմանական ամբիոնում ստեղծվել է «Ֆրանց Վերֆելի կոմիտեի» մասնաճյուղ Ալինա Տոնոյանի ղեկավարությամբ: Ջանում ենք սերտացնել կապը մասնաճյուղի հետ: Երեւանից հրավիրել ենք վերֆելագետ ավստրիական կոմիտեում աշխատելու համար: Այստեղ հանդիպում տեղի ունեցավ «Մուսա լեռ» հայրենակցական միության նախագահ Կամո Տեր-Պետրոսյանի հետ եւ նախանշվեց գալիք համագործակցության ծրագիրը: Ընթացիկ տարում Վիեննայում կանցկացվի Ֆրանց Վերֆելին նվիրված միջազգային գիտաժողով, որին կմասնակցեն աշխարհի տարբեր երկրների ներկայացուցիչներ: Գիտաժողովում զեկուցումով հանդես կգա նաեւ ձեր զրուցակիցը: Եվ վերջապես, լույս է տեսել եւ շուտով ընթերցողին կհասնի «Հայասան, թաքուն ցեղասպանություն» աշխատության հայերեն թարգմանությունը, որը վերանվանված է «1915 թվական, նոր վավերական փաստեր»:

Բացի դրանից, լույս է տեսնելու «Մուսա լեռան հառաստն օրը» գեղարվեստա-վավերագրական ֆիլմի սցենարը: Հայերի ցեղասպանության մասին աշխատության բնօրինակը լույս է տեսել 2000 տպաքանակով, տարածվել եւ վաճառվել է ոչ միայն Ավստրիայում, այլեւ գերմանախոս ուրիշ երկրներում: Աշխատության հայկական տարբերակի տպաքանակը 1500 է: Ֆիլմի սցենարի տպաքանակը 500 է: Աշխատության եւ ֆիլմի երեւան գալը միջազգային հանրությանը տրամադրել են այլ հայացքով նայելու հայկական հարցին: Ասեմ նաեւ, որ «Մուսա լեռան հառաստն օրը» վեպը թարգմանվել եւ հրատարակվել է նաեւ թուրքերեն եւ թուրք ժողովրդին եւս հնարավորություն է ընձեռվել իմանալու ճշմարտությունը ոչ հեռավոր անցյալի դաշնության մասին:

– Պարոն Օհանջանյան, թույլ տվեք երախտագիտություն արտահայտել ձեր անձնվեր գործունեության համար: Ձեր եւ Ձեզ նմանների ջանքերով են վերակերտվում դաշնական իրողություններ, որոնք նպաստում են ճշմարտության հաստատմանն ու ազգի գոյատեւմանը:

– Յուրաքանչյուրի դարտականությունն է՝ ապրել եւ գործել հանուն ճշմարտության:

ՀՐԱՉՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հարգելի հանդիսատես,

Մաեստրո Լորիս Ճգնավորյանը վերադառնում է իր գործունեությանը: Մեր այս համերգաշրջանի բացումը սկսում ենք հոկտեմբերից նվիրելով Ա. Խաչատրյանի ծննդյան 95-ամյակին:

Հոկտեմբերի 4-ին, ժամը 11-ին հոգեւոր երաժշտության համերգը նվիրվում է Ֆրունզե Դովլաթյանի հիշատակին եւ հնչելու է Վ. Ա. Մոցարտի «Ռեքվիեմը»:

Հոկտեմբերի 5-ին Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի հետ համատեղ դատրասվում է դրամատիկական Գ. Իբսեն-է. Գրիգ-«Պեր Գյունտ»:

Հոկտեմբերի 12-ին նվագախմբի նախաձեռնությամբ կկայանա մաեստրոյի 60-ամյակին նվիրված գալա համերգը, որտեղ սպասվում են հետաքրքիր անակնկալներ, ինչպես մաեստրոյի, այնպես էլ հանդիսատեսի համար:

Հոկտեմբերի 17-ին եւ 19-ին 15 տարի բացակայությունից հետո Երեւանում Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հրավերով, ելույթ կունենա Արթուր Փափազյանը, որը երկու համերգների ընթացքում կկատարի Լ. Վ. Բեթհովենի 5-րդ դաշնամուրային կոնցերտները:

Հոկտեմբերի 26-ին կկայանա Ա. Բրուքների 8-րդ սիմֆոնիայի դրամատիկական:

Եվ այսպես, մաեստրո Լորիս Ճգնավորյանը, սկսյալ հոկտեմբերի 4-ից, ղեկավարելու է հոկտեմբեր ամսվա համերգները «Արամ Խաչատրյան» համերգատանում:

Բացվեց Ռուբեն Ադալյանի ցուցահանդեսը

Սեպտեմբերի 26-ին Ազգային դատկերասրահը եւ նկարիչների տունը բացառիկորեն մարդաշատ էին: Այստեղ հանդիսությամբ բացվեց Հայաստանի ժողովրդական նկարիչ Ռուբեն Ադալյանի 50-ամյա ստեղծագործական ճանապարհը ներկայացնող ցուցահանդեսը՝ ուսումնառական գործերից մինչեւ վարպետի ներկայիս կտավները: Ցուցահանդեսի բացման արարողությանը ելույթ ունեցան Հայաստանի նկարիչների միության նախագահ, արվեստաբան Պողոս Հայթայանը, ժողովրդական նկարիչ Էդվարդ Իսաբեկյանը, գեղարվեստի ինստիտուտի ռեկտոր, նկարիչ Արամ Իսաբեկյանը: Կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը իր ելույթում նշեց, որ Ռ. Ադալյանը ահա չորս տասնամյակ եղել ու մնում է կերպարվեստի զարգացման առաջատար, եւ նրա ստեղծագործությունը հայոց մշակույթի հարստությունն է:

Ցուցահանդեսը կգործի մինչեւ հոկտեմբերի 12-ը:

ԳԵՂԱՆԿԱՐՇՈՒԹՅՈՒՆ

Ազգային ոգի կրող մանրանկարչությունը

Լիլիթ Ամիրջանյանի նոր խոսքը ավանդական ժանրում

Արցախ աշխարհի Թաղավարդ գյուղում ծնված Լիլիթ Ամիրջանյանը չորս տարեկան հասակում ընտանիքով տեղափոխվել է Երեւան: Ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի նկարչական ֆակուլտետը: Ունեցել է գրաֆիկական աշխատանքների երկու ցուցահանդես՝ Հայաստանի գրողների տանը (1985) եւ Կինոյի տանը (1987): Խմբային ցուցահանդեսների մասնակցել է Կանադայում եւ Երեւանում:

1992-93 թվականներին խաժակ սրբազանի հրավերով վեց ամիս աշխատել է ԱՄՆ-ի հայ եկեղեցու արեւելյան թեմի առաջնորդարանում, որտեղ կատարել է մանրանկարչական աշխատանքներ: Դրանք մանրանկարչական ոճով արված գրաֆիկական աշխատանքներ են: Մինչ այդ, 1986-ին, նա ձեւավորել է Լեոնարդո դա Վինչիի «Հեքիաթներ, լեգենդներ, առակներ», իսկ 1987-ին՝ Նահապետ Քուչակի «Հայրենիներ», Ստելլա Վարդանյանի «Ամիրդովլաթ Ամասիացի» գրքի շարքերի ձեւավորումը եւ Անահիտ Խարմանդարյանի «Բարձրացիր գագաթը եւ նայիր շուրջդ» գրքերը:

Հայաստանի գրողների միությունում օրերս բացված ավետարանական թեմաներով նրա 35 ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներն ու 5 ընդօրինակությունները կատարվել են 1991-96 թթ.՝ Մատենադարանում, որտեղ աշխատում է իբրեւ մանրանկարիչ:

Մարդաբաս սրահի այցելուները հիացմունքով դիտեցին վառ գույներով արված «Խորհրդավոր ընթրիք», «Մատնություն», «Խաչելություն», «Ադամ եւ Եվա», «Վտարում դրախտից», «Մարգարեների գուշակումը» եւ ուրիշ մանրանկարներ: Ընդօրինակումներից են Գրիգոր Նարեկացու դիմանկարը (Ծաղկող Գրիգոր Սլիմեցի), Թարգմանչաց Ավետարանի «Ավետումը» (Գրիգոր Ծաղկող): Դրանք արված են նոր ընչով: Այդ գործերով նկարչուհին մեր ժամանակը կապում է անցած դարերի հետ: Քչերին է դա բախտ վիճակվում: Այդ քչերից է Լիլիթը, որը մեր ազգային ոգու կրողն է: Եթե միջնադարում մանրանկարչությամբ գերազանցապես զբաղվել են տղամարդիկ, ապա մեր օրերում՝ Լիլիթի պես նվիրյալը:

Ցուցահանդեսի բացմանը ՀԳ միության նախագահ Հրանտ Մաթեւոսյանի խոսքին հաջորդեցին Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանի, բանաստեղծ Արտաշես Ղազարյանի, հրապարակախոսներ Մարգո Ղուկասյանի եւ Հրաչյա Մաթեւոսյանի, քանդակագործ Ղուկաս Չուբարյանի, նկարչուհի Ադա Գաբրիելյանի ոգեւորված ու ոգեւորող ելույթները: Վերջինս այցելուների մատյանում գրեց. «Լիլիթ Ամիրջանյանի նկարների շարքը վկայումն է հայ միջնադարի նկարչության հավերժական կյանքի: Ավետարանական թեմաները կատարված են մեծ ներշնչանքով, գունային ազդեցիկ լուծումներով: Ինքնուրույն նկարաշարը անպայմանորեն հեղինակային նոր լուծման կնիքը ունի եւ վկայությունն է նկարչուհու ինքնատիպ տաղանդի»:

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՆԱՆՅԱՆ

Դրամատիկական թատրոնի հոբելյարները

Ադելինա Հովակիմյան

Լրացավ Երեւանի քաղաքային թատրոնի դերասան Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դիմահարդար, Հայաստանի կուլտուրայի վաստակավոր աշխատող Սեդա Մաղաքյանի եւ ռեկվիզիտոր Ադելինա Հովակիմյանի ծննդյան 70-ամյակը: Նրանք կանգնած են եղել թատրոնի ակունքներում եւ շուրջ երեք տասնամյակ նվիրվածորեն ծառայում են նրան: Մեծ է նրանց վաստակը թատրոնի ստեղծագործական նվաճումներում: Թեեւ նրանք, հասկանալի պատճառով, դերասանների ու բեմադրիչների չափ չեն երեւացել բեմում, սակայն միշտ ներկա են իրենց սիրտ ու հոգով, մասնագիտական բարձր վարպետությամբ, իրենց կանացի նրբությամբ, իրենց սիրով ու լույս տվել բեմական իրերին՝ ընչավորելով նրանց: Նրանց հայացքն ու հոգին թաթախված է թատերական-նկարչական արվեստում, նրանք անձայն խոսում են, եւ այդ խոսքը ահա մի քանի տարի, Դրամատիկականի բոլոր ներկայացումների միջոցով հասնում է հանդիսատեսին եւ հոգում նրան:

Սեդա Մաղաքյանը եւ Ադելինա Հովակիմյանը Դրամատիկականի հպարտություններից են, մեր թատերական կյանքում իրենց լավագույն կողմերով հաստատած անհատականություններ, հարազատ մարդիկ, կարեւոր եւ անփոխարինելի: Օրերս, «Մեծ լռություն» ներկայացման հերթական խաղարկումը նվիրվեց նրանց հոբելյանին եւ թատրոնի ամբողջ անձնակազմն ու հարգարժան հանդիսատեսներ շնորհակալական ծափերով ողջունեցին նրանց:

Սեդա Մաղաքյան

պատասխանատվությամբ առ բեմը եւ հանդիսատեսը: Նրանք «կերպավորել են» դերասանների դեմքերը, տուժ եւ

Մարզական

ՇԱԽՄԱՏ

«Երեւան-Դինամո» եվրաչեմպիոնների գավաթի եզրափակիչում

Երեւանում ավարտվեցին եվրոպական երկրների չեմպիոնների գավաթի խաղարկության փնջային մրցումները

եզրափակիչ մրցումների միակ ուղեգրի համար պայքարեցին յոթ թիմեր (ութերորդի՝ Նովոսիբիրսկի «Սիբէկոբանկի» շախմատիստները մրցավայր չներկայացան):

Առաջին տուրի երեք հանդիպումներն էլ ավարտվեցին կողմերից մեկի վստահ հաղթանակով. «Բեր Շեւա» (Իսրայել)-«Թյուրք Եշիթիմ Դերնեգի» Անկարա (Թուրքիա) 6-0, «Դոնբաս» Ալչեւսկ (Ուկրաինա)-Սկարայի շախմատային ակումբ՝ 5-0, «Երեւան-Դինամո» (Հայաստան)-«Սոնա» Զուգդիդի (Վրաստան)՝ 5-1:

Հաղթող եոյակը եւ Երեւանի «Հայաստան-ՖԻՍԱ»-ն այնուհետեւ խաղացին 1-4-րդ, իսկ պարտվողները 5-7-րդ տեղերի համար: «Երեւան-Դինամո»-«Հայաստան-ՖԻՍԱ» «ընտանեկան» մրցավեճում վերջինիս երիտասարդ շախմատիստները չկարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ իրենց փորձառու մրցակիցներին՝ մրցախաղն ավարտվեց 5-1 հաշվով: Շաս համառ ստացվեց մյուս մրցախաղը. «Բեր Շեւա»-«Դոնբաս» հանդիպման ժամանակ կողմերը մեկական հաղթանակ տարան, չորս պարտիա ավարտեցին խաղաղ արդյունքով՝ 3-3: Քանի որ մրցախաղը ոչ-ոքի ավարտվեց, հաշվի առնվեցին լրացուցիչ ցուցանիշները. դրանք Իսրայելի թիմի օգտին էին, որը եւ իրավունք ստացավ Երեւանցիների հետ վիճարկելու առաջին տեղը:

Չափազանց լարված ստացվեց հաղթողի կոչման համար «Երեւան-Դինամո»-«Բեր Շեւա» մրցախաղը: Բավական է ասել, որ վեց պարտիաներից հինգն արդյունավետ եղան, եւ միայն մեկը ոչ-ոքի ավարտվեց: Հաշիվն է 3,5-2,5:

1/2 Վ. Հակոբյան-Ա. Խուզման 1/2
0 Ռ. Վահանյան-Ս. Դվոյրիս 1
1 Ս. Լոուսյան-Ա. Գրինֆելդ 0
0 Ա. Անասասյան-Վ. Միխայլեվսկի 1
1 Ա. Սինասյան-Բ. Ամրուխ 0
1 Ա. Պետրոսյան-Ս. Ցեյտլին 0

Ամեն ինչ վճռվեց այս վերջին պարտիայում, որը բավականին հուզումնալից ընթացքից հետո ի վերջո երջանիկ ավարտ ունեցավ «Երեւան-Դինամոյի» համար:

Ավելացնենք, որ մեր շախմատիստներից Արսաբես Սինասյանն ու Արշակ Պետրոսյանը 3-ական միավոր բերեցին իրենց թիմին:

Երեւանյան փնջայինի վերջնական արդյունքներն այսպիսին են՝ 1. «Երեւան-Դինամո», 2. «Բեր Շեւա», 3. «Դոնբաս», 4. «Հայաստան-ՖԻՍԱ», 5. «Սոնա», 6. «Թյուրք Եշիթիմ Դերնեգի», 7. «Սկարա»:

Այսպիսով, «Երեւան-Դինամոն» իրավունք նվաճեց հանդես գալու եվրոպական չեմպիոնների գավաթի եզրափակիչում, որը կանցկացվի նոյեմբերի վերջերին:

Իսկ վերջում մրցումներից խաղացած մի պարտա ներկայացնենք ընթերցողների ուշադրությանը:

Խաղում են Վ. Միրզոյանը եւ Վ. Հակոբյանը

Ղ. ԿՈՂՈՒՍ-Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ՆՈՆԱ» «ԵՐԵՎԱՆ-ԴԻՆԱՄՈ»

1.d4 ♘f6 2.♘f3 d6 3.♗f4 ♘bd7 4.e3 ♘h5 5.♗g5 h6 6.♗h4 g5 7.♗g3 ♗g7 8.♗d3 e6 9.c4 ♘g3 10.hg3 c5 11.0-0 g4 12.♘fd2 cd4 13.♕g4 ♕g5 14.♕e2 de3 15.♘e4 ♕e5 16.fe3 0-0 17.g4 d5 18.♘ec3 d4 19.♘e4 de3 20.g5 hg5 21.♘bc3 f5 22.♘g5 ♘f6 23.♖f3 ♗h6 24.♘h3 ♘g4 25.g3 ♗d7 26.♘f4 ♖f6 27.♖e1 ♗c6 28.♖ff1 ♖d8 29.♘h5 ♖g6 30.♘f4 ♗f4 31.♖f4 ♕h8 32.♗e4

32...♖d2 0-1

ՀՈԲԵԼՅԱՆ

Արկադի Անդրեասյանի 50-ամյակը նշվեց հանդիսավոր պայմաններում

Կիրակի օրը «Հրազդան» մարզադաշտում հանդիսավորությամբ նշվեց հանրաճանաչ ֆուտբոլիստ Արկադի Անդրեասյանի ծննդյան 50-ամյակը: Ա. Անդրեասյանը շուրջ տասը տարի հանդես է եկել Երեւանի «Արարատի» կազմում, նրա մարզական կենսագրության լավագույն տարիները համընկան հանրապետության գլխավոր թիմի «ոսկեդարի» հետ՝ Արկադին թիմի կազմում դարձավ Խորհրդային Միության չեմպիոն եւ գավաթակիր: Նա մի քանի տարի խաղաց ԽՍՀՄ-ի հավաքականում, արժանացավ օլիմպիական խաղերի բրոնզե մեդալին: Մարզական կարիերան ավարտելուց հետո անցավ մարզչական աշխատանքի եւ այժմ մարզում է հարազատ «Արարատ» թիմը:

Միջոցառումը, որն անցավ տոնական մթնոլորտում, կազմակերպել էր հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիան: Հոբելյարին ողջունեցին եւ նվերներ հանձնեցին ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ա. Սարգսյանը, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարի տեղակալ Ի. Զաքարյանը, ՀՀ պաշտպանության փոխնախարար, գեներալ-մայոր Ա. Պետրոսյանը, «Հրազդան» մարզադաշտի տնօրեն Հ. Քեհեյանը, Գյումրիի «Շիրակ» թիմի գլխավոր մարզիչ Ա. Աղամյանը: Նվերներ հանձնվեցին նաեւ «Արարատ», Երեւանի «Փյունիկ» եւ Արարատի «Ցեմենտ» ակումբների կողմից: Յորանասունականների արարատցիների կողմից ընկերոջը ջերմ խոսքեր ասաց ավագը՝ Հ. Զանազանյանը:

Օրվա գլխավոր իրադարձությունը «Արարատ-73»-ի եւ ներկայիս «Արարատի» հանդիպումն էր: «Արարատ-73»-ը դաշտ դուրս եկավ մարտական կազմով՝ Նորայր Դեմիրճյան, Սուրեն Մարտիրոսյան, Արմեն Սարգսյան, Ալեքսանդր Կովալենկո, Նորայր Մեսրոպյան, Արկադի Անդրեասյան, Սերգեյ Բոնդարչենկո, Լեւոն Իշտոյան, Սերգեյ Պողոսյան, Հովհաննես Զանազանյան, Նիկոլայ Ղազարյան: Նշենք, որ Ա. Կովալենկոն եկել էր Մոսկվայից, Ս. Բոնդարենկոն ու Լ. Իշտոյանը՝ ԱՄՆ-ից: Առաջ անցնելով ասենք, որ վերջինս խաղավարից հետո զույգի ընթացքում շնորհակալական խոսքեր ուղղեց ֆուտբոլի հանրապետական ֆեդերացիային, որի հրավերով եւ միջոցներով իրենք հնարավորություն ստացան գալ հայրենիք, կրկին հանդիպել իրենց ընկերներին, մասնակցել հոբելյանական միջոցառմանը:

Լուսանկարը՝ Ա. Մարտիրոսյանի

... Խաղն սկսվեց երիտասարդների բուռն գրոհներով, եւ թվում էր, թե «ծերուկները» չեն դիմանա լարվածությանը: Իրոք, շուտով Արա Ոսկանյանն ու Վահե Յաղմուրյանը երկու գնդակ խփեցին «Արարատ-73»-ին: Սակայն վետերանները հավաքեցին իրենց, կարծես թե հիշեցին իրենց ջահելությունը ու իրար հետեւից երեք անգամ գրավեցին մրցակցի դարպասը: Երկու գոլ խփեց Ս. Պողոսյանը, մեկը՝ Լ. Իշտոյանը: Ընդմիջումից հետո «Արարատ-73»-ի կազմում փոփոխություններ կատարվեցին. իրենց ընկերներին փոխարինեցին Աշոտ Խաչատրյանը, Ռաֆայել եւ Պողոս Գալստյանները, Ալեքսանդր Քերոբյանը, Գագիկ Հովհաննիսյանը, Հովհաննես Կիրակոսյանը, ինչպես նաեւ պաշտպանության փոխնախարար Աստվածատուր Պետրոսյանը: Երկրորդ խաղակեսում ավագները խփեցին եւս մեկ գոլ (Լ. Իշտոյան): «Արարատ-73»-ը հաղթեց 4-2 հաշվով: Ի դեմ, Լեւոն Իշտոյանն արժանացավ «Ցեմենտ» ակումբի՝ լավագույն հարձակվողի համար սահմանված մրցանակին:

Խաղից հետո հուզված խոսք ասաց հոբելյարը: Արկադի Անդրեասյանը շնորհակալական խոսք ուղղեց միջոցառման կազմակերպիչներին, իր ընկերներին ու սաներին, ֆուտբոլասերներին:

Պայքարը ավելի է արվում

Մինչեւ 16 եւ 18 տարեկան պատանիների եւ աղջիկների աշխարհի առաջնություններում պայքարն ավելի լարված բնույթ է ստանում: Արդեն խաղացվել է 7 տուր. այսինքն՝ մրցաշարերը թեւակոխել են այն փուլը, երբ իրար հետ են հանդիպում հավասար (կամ՝ մոտավորապես հավասար) ուժի խաղացողները: Դրա արդյունքն է նաեւ այն, որ զգալիորեն շատացել են ոչ-ոքիները:

Մինչեւ 18 տարեկան պատանիների մրցաշարում երեւանցի Կարեն Ասրյանը, որը 5 պարտիաներում ընդամենը կես միավոր էր կորցրել, վերջին երկու տուրերում ոչ-ոքի խաղաց իր մրցակիցների՝ Ալիկ Գերշոնի (Իսրայել) եւ Ռուսլան Պոնոմարյովի (Ուկրաինա) հետ: Այժմ այս 3 շախմատիստները՝ Ալեքսեյ Իլյուշինի (Ռուսաստան) եւ Սթելիոս Հալկիասի (Հունաստան) հետ միասին բաժանում են 1-5-րդ տեղերը: Նրան ունեն 5,5-ական միավոր: Առաջատարներից կեսական միավորով ետ են մնում 3 շախմատիստներ, որոնց թվում է մեր Արթուր Չիբուխչյանը: Ցավոք, Անդրանիկ Մաթիկոզյանը, որը մինչ այդ առաջատարների խմբում էր, վերջին երկու տուրերում միայն կես միավոր վաստակեց:

Մինչեւ 16 տարեկան պատանիների առաջնության վերջին տուրերում վերելով են խաղում ռումին Լեւենտ Վայդան ու հնդիկ Չադրան Մագեշը: Հենց նրանք էլ 6-ական միավորով գլխավորում են մրցաշարային աղյուսակը: 6-րդ եւ 7-րդ տուրերում երկու հաղթանակ տարավ երեւանցի Լեւոն Աղոնյանը: Երկու դեպքում էլ Լեւոնը գեղեցիկ ոճով առավելության հասավ նախ՝ Վալերի Գափրինդաշվիլու (Վրաստան), ապա՝ Մարցին Շելագի (Լեհաստան) նկատմամբ: Այժմ Աղոնյանը 5,5 միավորով 3-4-րդ տեղերն է բաժանում իսրայելցի Ալեքսանդր Կունդինի հետ միասին: Այստեղ մեր մյուս 7 ներկայացուցիչներից համեմատաբար հաջող հանդես են գալիս Վարուժան Հակոբյանն ու Տիգրան Քոթանջյանը, որոնք 4,5-ական միավոր են վաստակել:

Կրտսեր տարիքի աղջիկների մրցաշարը միանձնյա գլխավորում է չինուհի Յուանյուան Քյուն՝ 6 միավոր: Նրանից ընդամենը կես միավոր է պակաս վաստակել եկատերինա Պոլովնիկովան (Ռուսաստան): Այս երկուսին հետաքնդում են 8 շախմատիստուհիներ, որոնք ունեն 5-ական միավոր: Նրանց թվում են մեր Նելլի Աղինյանը, Լիլիթ Մկրտչյանը եւ Նարինե Գասպարյանը: Վերջինս, ցավոք, զիջել է իր դիրքերը: Շախմատասերները, թերեւս, հիշում են, որ 5 տուրից հետո Նարինեն առաջատարների եռյակում էր:

Մինչեւ 18 տարեկան աղջիկների մրցումներում երկիշխանություն է: Վեց անընդմեջ հաղթանակից հետո Թրանգ Տան Հոանգը (Վիետնամ) 7-րդ տուրում պարտություն կրեց վրացուհի Ռուսուդան Գոլեթիանիից եւ այժմ նրա հետ միասին բաժանում է 1-2-րդ տեղերը: 4 շախմատիստուհիներ մեկ միավոր պակաս են վաստակել: Այս տարիքային խմբում 50-տոկոսանոց արդյունք ունի երեւանցի Լիլիթ Գասպարյանը: Մեր մյուս երկու մասնակիցներն ավելի քան համեստ արդյունքներ ունեն:

Միջազգայինը մեկնարկեց

Երեկ մայրաքաղաքի «Էրեբունի» հյուրանոցում մեկնարկեց շախմատային երրորդ խոշոր միջոցառումը՝ միջազգային մրցաշարը: Մասնակիցների թվում են բազմաթիվ երկրների 46 շախմատիստներ: Հետաքրքիր է, որ նրանց ուղիղ կեսը՝ 23-ը, մեր հանրապետության ներկայացուցիչներն են:

Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 տուրով: Բավականին խիստ է խաղակարգը. առաջին չորս օրերի ընթացքում կանցկացվեն երկուական տուրերի, եւ միայն մրցումների վերջին օրը՝ հոկտեմբերի 3-ին՝ մեկ տուրի հանդիպումներ:

Ռոբերտ Էմմիյանը՝ հովանավոր

ԵՐԵՎԱՆ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի անվանի թեթեւատլետ, Եվրոպայի 11-ամյա անփոփոխ ռեկորդակիր, հեռացատկորդ Ռոբերտ Էմմիյանը հայտարարեց, որ Արշաուտում ավարտված թեթեւ ատլետիկայի ՀՀ առաջնությունում լավ արդյունք ցույց տված մարզիկների համար իր հաշվին 10-օրյա ուսումնամարզական հավաք կկազմակերպի Ֆրանսիայում, որտեղ նա ներկայումս բնակվում է եւ Հունաստանում, որտեղից են էմմիյան ընտանիքի արմատները:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

մեկ սենյականոց բնակարան 9 հարկանի շենքի 8-րդ հարկում, Խորենացու փողոցում:

Զանգահարել 23-37-96

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

մեկ սենյականոց բնակարան Կոմիտաս փողոցում, 5 հարկանի շենքի 5-րդ հարկում (Արաբկիր հանրախանութի շենքում):

Զանգահարել 23-34-35

ԻՆՔԴ ՔԵԶ

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ՆՎԻՐԻՐ՝

ԲԶՁԱՅԻՆ ՍՆՈՒՑՄԱՆ ՎԵՐՁԻՆ 3 ԾՐԱԳՐԵՐԸ

Հեռ. 27-10-21, զանգահարել ժամը 19-22-ը

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել 27 22 57
ժամը 10-16, 58 33 26
ժամը 18-23

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

սեփական երկհարկանի շենքի 2-րդ հարկը՝ բաղկացած երեք սենյակից: Երկու կողմից սեփական հողատարածք՝ 300 քառ մետր ընդհանուր մակերեսով: Երկու ավտոտնակ, մուտքը առանձին:

Հասցեն՝ Զրաբաս 68
(ԳԱՄ հետեւի մասում):
Հեռախոս 52-54-39:

ԱԶԳ

Օրվա հետքով

ԲԱՔՎԻ ՍԱՍՈՒԼ

«Քանի դեռ Հայաստանն ու Ադրբեջանը գոյություն ունեն...»

Ադրբեջանի նախագահի խորհրդականի կարծիքը այս հարցում միանշանակ է

«Բակինսկի ռաբոչի» օրաթերթի սեպտեմբերի 13-ի համարում տպագրվել է Ադրբեջանի նախագահի արտաքին հաղորդակցության հարցերով պետական խորհրդական Վաֆա Գուլուզադեի հարցազրույցը՝ հեռարձակված հանրապետական հեռուստատեսությամբ: Հոդվածը վերնագրված է «Ադրբեջանի արդարացի դիրքորոշումը աջակցություն է գտնում ամբողջ աշխարհում» եւ շոշափում է հարցեր, որոնք անկարեւոր չեն հայ ընթերցողի համար: Ստորեւ ներկայացնում ենք որոշ հատվածներ Վ. Գուլուզադեի արտահայտած մտքերից:

«ԵՐԵՎԱՆ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Ադրբեջանը հասել է իր կողմից առաջադրված բոլոր նպատակներին կազմված ԼՂ հակամարտության կարգավորման հարցի հետ. քանի որ, այդ հարցը քննարկվել է ամենաբարձր մակարդակներում: Անցյալ տարվա դեկտեմբերին տեղի է ունեցել ԵԱՀԿ անդամ երկրների կառավարությունների ու դեկավարների հանդիպումը Լիսաբոնում, որտեղ ընդունվել է արդարացի որոշում միանգամայն համաղասախան հայ-ադրբեջանական հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու վերաբերյալ մեր տեսակետներին: Ես մեկ անգամ եւս ցանկանում եմ նշել, որ Լիսաբոնյան սկզբունքներն իսկապես ադրբեջանական դիվանագիտության ղասմական հաղթանակի արդյունք են: Համոզված եմ, որ հակամարտությունը կկարգավորվի այս սկզբունքների հիման վրա:

Ինչպես գիտեք, 1992-93 թթ. արեւմտյան երկրները անտարբեր էին հակամարտության կարգավորման հարցով: Բայց այժմ արեւմտյան դեսությունները շատ ակտիվորեն մասնակցում են խաղաղ ճանապարհով խնդրի կարգավորմանը: Ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ եվրոպական նահանգները նեղ հետաքրքրություն են ցուցաբերում այս հակամարտությունը շուտափույթ լուծելու օգտին: Ես գիտեմ, որ Ռուսաստանը ժամանակին դիմադրում էր արեւմտյան երկրների ակտիվ մասնակցությանը...

...Սեպտեմբերի 18-ից հետո Մինսկի խմբի համանախագահները կսկսեն ակտիվորեն աշխատել եւ Ադրբեջանի, եւ հատկապես Հայաստանի հետ, քանի որ անհրաժեշտություն կա Հայաստանին ընդհանուր հայտարարի բերել Ադրբեջանի հետ: Հայաստանի ազգային շահերը տարածաշրջանում պահանջում են խաղաղություն հաստատել, սակայն որոշակի պատճառներ հայկական ազգայնականությունը եւ Ռուսաստանի որոշ շրջանակների կայսերապաշտական տրամադրությամբ ուժերը խանգարում են հակամարտության արագ լուծմանը: Բայց դատմությունը, ժամանակը եւ Ադրբեջանի կողմից կիրառվող խաղաղասիրությունն ու ձեռքբերված հաջողությունները հակամարտության լուծման հնարավորություն կստեղծեն: Այդ դատճառով մենք անհամբեր սպասում ենք Մինսկի խմբի համանախագահների այցին նրանց հետ աշխատանքն ակտիվորեն շարունակելու համար...

Եթե խոսենք նախագահ Հ. Ալիեւի ԱՄՆ կատարած դաշտոնական այցի արդյունքների մասին, դեպք է ասենք, որ անմիջական արդյունքներ չդեպք է սպասել: Այդ այցը դատմական է: Այդ այցի ծանրակշիռ արդյունքները իրենց դտուղը կտան Ադրբեջանի դատմության ընթացքում:

Այո, քանի դեռ գոյություն ունեն Ադրբեջանը եւ Հայաստանը, մենք Հայաստանի կողմից հարձակումների ենթակա կլինենք: Որովհետեւ Հայաստանը հակառակորդ դետություն է: Նա շատ ուժեղ լոբբի ունի Մոսկվայում, Ամերիկայում եւ այլ վայրերում: Նրանք կարող են ազդեցություն բանեցնել եւ Դումայում, եւ Կոնգրեսում: Մենք մշտապես դեպք է դատրաստ լինենք դայքարելու նրանց դեմ օրենքի շրջանակներում: Ադրբեջանը ներկա փուլում լիովին ցուցադրել է իր դայքարի դատրաստակամությունը...

...Ամերիկայի հետ մեր երկրի կապերի անընդմեջ զարգացումը ռազմավարական շահեր է ներկայացնում եւ Ադրբեջանի, եւ Ամերիկայի համար: Ադրբեջանն իսկապես դարձել է ամբողջ աշխարհի համար կարեւորություն ունեցող երկիր: Այստեղ կենտրոնացել են Ամերիկայի, Եվրոպայի եւ Ռուսաստանի շահերը: Ես միանգամայն հավատում եմ Ռուսաստանի հետ Ադրբեջանի հարաբերությունների առղագային, քանի որ ՌԴ ազգային շահերը դահանջում են նախադատվությունը տալ Ադրբեջանի հետ համագործակցությանը: Կայսերապաշտական նկրտումներից ազատագրվելու հետ մեր երկու երկրների հարաբերությունները կընդլայնվեն եւ կամրադնդվեն:

– Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ կնքված համաձայնագիրը, ինչ խոսք, արդյունք է մեր դետության դեկավարի ԱՄՆ կատարած այցի նկատմամբ նախանձի: Այդդե՞ս է:

– Դատճառներ կարող են շատ լինել: Այսինքն կարելի է տարբեր կերդ մեկնաբանել: Սակայն Հայաստանի աշխատանքը, Մոսկվայի հետադիմական շրջանակների աջակցությունը Ադրբեջանի դեմ Հայաստանի ագրեսիային, Ռուսաստանի վերաբերմունքը Հայաստանին որոշես իր առաջադահ հենակետ, հայտնի են: Այդ դատճառով Ադրբեջանն իր կարծիքն է հայտնել նշյալ դայմանագրի մասին Ռուսաստանի կառավարությանն ուղղված բողոքի նոտայում: Մենք բացարձակապես դժգոհ ենք այդ դայմանագրից: Մենք չենք հասկանում, թե որքնք են Ռուսաստանի եւ Հայաստանի ռազմաստրատեգիական շահերի ընդհանրությունները: Մեր դիրքորոշումը մենք արտահայտել ենք կտրուկ ձեւով եւ դատասխան ենք դահանջում:

Որքան ինձ հայտնի է, մյուս դետությունները եւս դժգոհ են այդ դայմանագրից: Օրինակ, Ադրբեջանում ԱՄՆ գործերով ժամանակավոր հավատարմատարի հետ զրույցի ժամանակ տեղեկացա, որ ԱՄՆ-ը եւս անհանգստացած է այդ դայմանագրից եւ դատրաստվում է բացատրություններ դահանջել Ռուսաստանից:

Ամենախաղեղ զորախաղեր Վրաստանում

Ըստ միջազգային լրատվամիջոցների, Արեւմտյան Վրաստանի տարածքում սեպտեմբերի 27-ին սկսվեցին աննախադեղ ծավալ ունեցող զորախաղեր, որոնց մասնակցում են Վրաստանի բանակի ավելի քան 10 հազար զինծառայողներ, շուրջ 100 տանկեր եւ զրահամեքենաներ, հրետանի, օդուժը եւ նավատորմը: Նախատեսվում է ծովից դեսանտ իջեցնել Արեւմտյան Վրաստանի ափ: Զորախաղերը սկսվեցին աբխազական ջոկատների հարձակման եւ Սուխումից վրացիների հեռանալու 4-րդ տարեդարձի օրը եւ դա, մեկնաբանների կարծիքով, դատահական չէ: Ըստ երեւույթին, Թբիլիսին հասկացնել է տալիս, որ դատրաստ է դեդքերի ցանկացած զարգացման, քանի որ հուլիսի 31-ին արդեն իսկ լրացել է հակամարտության գոտում գտնվելու ռուս խաղաղադահների մանդատը: Վրաստանի նախագահը հայտարարեց, որ ինչպես էլ կարգավորվի հակամարտությունը՝ բանակցությունների օգնությամբ, թե այլ ձեւով, ով որ զոհվել է հանուն հայրենիքի, հերոս կմնա:

Շաբաթ եւ կիրակի օրերին Արեւմտյան Վրաստանի Զուգդիդի քաղաքում 2 դայթյուն տեղի ունեցավ: Առաջին դայթյունը՝ քաղաքային շուկայում եւ ոչ ոք չտուժեց: Ավելի հզոր դայթյուն տեղի ունեցավ Զուգդիդիի կայարանում, մարդատար գնացքի վագոնում, ինչի հետեւանքով 20-ամյա մի աղջիկ ծանր վիրավորվեց: Բարեբախտաբար, դայթյունը տեղի էր ունեցել գնացքի մեկնումից 1,5 ժամ առաջ, այլապես տուժածների թիվը շատ ավելի մեծ կլիներ: Վրաստանի ՆԳՆ-ն հայտարարեց, թե այդ դայթեցումներն աբխազական ահաբեկիչների ձեռքի գործն են: Իսկ Մոսկվայում նորից փակուղի են մտել Ռուսաստանի փոխարտգործնախարար Բորիս Պաստուխովի միջնորդությամբ Աբխազիայի կարգավիճակի հարցի շուրջ տեղի ունեցող վրաց-աբխազական բանակցությունները: Վրաստանի ներկայացուցիչները խոսում են միասնական, դաշնային դետության մասին, իսկ աբխազական կողմը համաձայն է միայն ընդհանուր դետության գաղափարին, դրա տակ հասկանալով համադաշնություն:

Դատրաստեց Գ. Է.-Տ.

Ցավակցություն

Մի խումբ նախկին համակուրսեցիներ խորագգաց ցավակցություն են հայտնում Լյուդմիլա Շուշանյանին նրա սիրելի եղբոր՝

Գուրգեն Շուշանյանի

վաղաժամ մահվան կապակցությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՆ ՀՐԱՎԻՐՎՈՒՄ

քարտուղարուհի հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուների լավ իմացությամբ եւ թարգմանիչ(ուհի) անգլերենից եւ ռուսերենից:

Հասցեն՝ Խորենացի 25
Հեռ.՝ 52-04-40

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կխնամեմ երեխա 10 ամսականից բարձր տարիքի:

Հեռ.՝ 24-88-56

«ԱՅԱՔՍ» ՖԻՐՄԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբերի 23–31-ը

ՖՐԱՆՍԻԱ ԵՎ ԻՍՊԱՆԻԱ

Երեւան-Փարիզ-Երեւան ուղիղ չվերթով

- Տեղավորումը՝ 3 եւ 4 աստղանի հյուրանոցներում
- Էքսկուրսիոն ծրագիր Փարիզում եւ Բարսելոնում

ԵՐԵՎԱՆ–ԼԱՌՆԱԿԱ (ԿԻՊՐՈՍ)

ուղիղ չվերթը կատարվում է երկու շաբաթը մեկ անգամ տուրիստական ուղեւորության եւ հաճելի ծովափնյա հանգիստ Կիպրոսում

- Հրաշալի Միջերկրական ծովափ
- Հաճելի ժամանց բոլոր տարիքների համար
- Էքսկուրսիաներ Կիպրոսի տեսարժան վայրերով
- Բարձրակարգ հյուրանոցներ բոլոր հարմարություններով

ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ՝ Փ. 43 Ա
ՀԵՌ. 532-432, 538-845

«ԲՐԱԲԻՈՆ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

1. Լայն դրոֆիլի ֆլորիստ-դիզայներների
2. Մայրաքաղաքի բարձրակարգ սպասարկման տարբեր սրահների կառավարիչ-ադմինիստրատորների կուրսերում:

Կարող են դիմել միջնակարգ եւ բարձրագույն կրթությամբ աղջիկներ եւ տղաներ:

Ընդունելությունը կատարվում է հարցազրույցով՝ հաշվի առնելով դիմորդի ընդհանուր զարգացածությունը:

Ադմինիստրատորների կուրսերում բարձրագույն կրթությունն ու բարեհեսությունը դարտադիր են:

Եռամսյա ուսման ընթացքում ուսանողները կծանոթանան ծաղկավաճառության ուղղություններին, արհեստական եւ բնական ծաղիկներից փնջեր, կոմպոզիցիաներ, զամբյուղներ դատրաստելու գաղտնիքներին, ինչպես նաեւ ինտերիերների եւ էքստերիերների ձեւավորման, գեղարվեստական փաթեթավորման արվեստին:

Լավագույն շրջանավարտները կդատահովվեն բարձրավճար աշխատանքով:

Հասցեն Աբովյան 11, հեռ. 56-14-38

Փաստաթղթերը ընդունվում են մինչեւ հոկտեմբերի 5-ը

ADANA
COMMERCIAL BANK

- Ընդամենը *1%-ով* 1 օրվա ընթացքում անհատ եւ իրավաբանական անձանց համար կատարում ենք փոխանցումներ *Մոսկվայից, Սանկտ-Պետերբուրգից, ԱՄՆ-ից, Կանադայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Լեհաստանից* եւ աշխարհի այլ երկրներից
- Սպասարկում ենք *VISA, MasterCard/EuroCard, Diners Club, JCB.*
- Ամենաշահավետ պայմաններով տարածում ենք *MasterCard/EuroCard.*
- Ընդունում ենք ավանդներ հետեւյալ տոկոսադրույքով.

Տար / Դրամ	1 ամիս	2 ամիս	3 ամիս	6 ամիս	9 ամիս	12 ամիս
USD DEM FRF	2.0%	4.0%	7.5%	15.0%	22.5%	36.0%
AMD RUR	2.0%	5.0%	8.0%	18.0%	28.5%	40.0%

Նվազագույն գումարը չի սահմանափակվում:

- Կատարում ենք բանկային ցանկացած գործառնություն:

Երեւան, Նալբանդյան 5, հեռ. 58-38-64, 58-59-80

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ – Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների մասին (առաջարկ, պահանջարկ) հեռախոսով: 589167, 581351:

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65 Դասիչ 69149. Պատվեր 673 Տոյաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 29. 09. 1997 Գինը՝ 100 դրամ